

ՊԱԱՊՏԱՅԻ ՄԵՁ

**«ԿԸ ՀԱՆԴԻՊԻՆՔ
ՅԱՌԱՋԻԿԱՅ ՇԱՐԱԾ՝
ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՆԻՍՏԻՆ»
ՇԵՇՏԵՑ ՄԻՔԱԹԻ**



Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երկվ կեսօրե ետք ընդունեց վարչապետ Նեժիպ Միքաթին, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները:

Հանդիպումն ետք Պաապտայէն կատարած յայտարարութեան մէջ վարչապետը յայտնեց, որ նախագահ Աունի հետ համաձայնած են կարգ մը հարցերու շուրջ:

«Կը հանդիպինք յառաջիկայ շաբաթ՝ կառավարութեան նիստին, որուն ընթացքին պիտի քննարկուին 2022-ի պետական ամավարկն ու կենցաղային հրատապ հարցեր», ըսաւ ան:

Միւս կողմէ, տեղեկատուական աղբիւրներ յայտնած էին, թէ Միքաթի հաստատած է, որ ինք աւելի քան երբեք կառչած պիտի մնայ քաղաքական սուր անկիւնները հարթելու իր կեցուածքին, որպէսզի կարելի ըլլայ շրջանցել այս դժուար փուլը:

Միքաթի ընդգծեց, որ ինք յուսալքումի անձնատուր պիտի չըլլայ եւ ոչ ոքի հետ բախումի մէջ պիտի ներքաշուի, այնքան ատեն որ իր սկզբունքներուն դէմ սպառնալիքներ չկան:

ԵՐԵՍՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

«ԷՄ. ԹԻ. ՎԻ.»-ԻՆ

ԿԸ ԲԱՅԱՅԱՅՏԷ ՀՅԳ-Ի

ԸՆՏՐԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒԹԻՒՆԸ



ՀՀԳ-ն ի՞նչ աշխատանքի մէջ է: Հարցում մը, որ ինքզինք կը պարտադրէ երեսփոխանական ընտրութիւններու սեփն՝ մեկնելով իր դաշինքներէն, որոնք ցուցանիշներ կը նկատուին անոր մասնակցած ընտրաշրջաններուն մէջ արձանագրուելիք արդիւնքներուն: Սակայն

ՀՀ Դաշնակցութիւնը այս շրջանին լուռ է, նոյնիսկ եթէ անոր մեքենաները կը գործեն ծառայողական եւ քաղաքական մակարդակներով:

1890-ին հիմնուած կուսակցութիւնը կը նկատուի լիբանանահայութեան մեծագոյն ներկայացուցիչը, սակայն ժողովրդային եւ քաղաքական այս ծանրութիւնը միշտ ալ չի թարգմանուիր իբրեւ ներկայացուցչական կշիռ՝ խորհրդարանին մէջ:

Այս իրականութեան պատճառը հիմնականին մէջ ընտրաշրջաններու բաժանումն է, որ հայկական քուն լուծած է ոչ հայկական քուններուն մէջ: Այս շրջագիծին մէջ իբրեւ օրինակ կարելի է նշել 2000-ի երեսփոխանական ընտրութիւնները, երբ Հարիրիի ընտրացանկերուն մէջ ներառուեցան Հնչակեան եւ Ռամկավար կուսակցութիւններուն թեկնածուները, որոնք խորհրդարանին մէջ պարտադրուեցան՝ սիւննիական քուններուն մեծամասնութեամբ:

2005-էն սկսեալ ՀՀԳ-ն Ազգային ազատ հոսանք կուսակցութիւնը ընտրեց իբրեւ հիմնական դաշնակից, որուն հիմամբ ալ մաս կազմեց Փոփոխութիւն եւ բարեկարգում համախմբումին, նախագահութեամբ՝ զոր. Միշել Աունի, որուն նախագահութիւնը տեւեց մինչեւ 2018: Իսկ վերջին ընտրութիւններէն ետք, ՀՀԳ-ն մաս կազմեց Հզօր Լիբանան համախմբումին, նախագահութեամբ՝ երեսփոխան Ժպարան Պասիլի:

2022-ի երեսփոխանական ընտրութիւններուն նախօրեակին ՀՀԳ-ի դիրքաւորման եւ նոր դաշնակիցներ ունենալու հաւանականութեան մասին հարցադրումները արդէն իսկ սկսած են պարտադրել իրենք զիրենք:

ԿԱՊԻՒԷԼ ՍԸՐԱՏ

Շաբ.ը՝ էջ 8

**«ԹՈՒՐԲԻԱՆ ՊԱԼՔԱՆԵԱՆ ՇՐՋԱՆԻՆ ՄԵՁ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ
ԵՒ ԿԱՅՈՒՆՈՒԹԵԱՆ ԵՐԱՇԽԱՒՈՐ ԵՐԿԻՐՆԵՐԷՆ ՄԵԿՆ Է,
ԵՒ ՊԻՏԻ ՇԱՐՈՒՆԱԿԷ ԱՅԳ ՈՒՂՂՈՒԹԵԱՄԲ
ԻՐ ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼ».**

Կ'ԸՍԷ ԷՐՏՈՂԱՆ

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիփ Էրտողան Ալպանիոյ մայրաքաղաք Թիրանայի մէջ այդ երկրի վարչապետ Իտի Ռամայի հետ իր հանդիպումն ետք մամլոյ միացեալ ասուլիսի ընթացքին յայտարարեց. «Թուրքիան Պալքաններուն մէջ խաղաղութեան ու կայունութեան երաշխաւոր երկիրներն մէկն է, եւ այսուհետեւ եւս պիտի շարունակէ իր պարտաւորութիւնները կատարել, ճիշդ ինչպէս մինչեւ այսօր կատարած է՝ շրջանին մէջ խաղաղութեան ու կայունութեան համար»:



Շաբ.ը՝ էջ 7

**ՇՈՒԷՏԻ ՄԵՁ «ՕՄԻՔՐՈՆ»-Ի
ՆՈՐ ՏԱՐԲԵՐԱԿ ՅԱՅՏՆԱԲԵՐԱԾ ԵՆ**

Շուեդական Ուփսալա քաղաքի ակադեմական տարրալուծարանին մէջ յայտնաբերուած է «Զորոնա» ժախրով «Օմիքրոն» տարբերակի ենթատեսակ: Այս մասին կը հաղորդէ «ՌԻԱ Նովոսթի»-ն՝ յղում կատարելով շուեդական լրատուամիջոցներուն:

Շաբ.ը՝ էջ 8



**ՊԱՔՈՒԷՆ ՊԻՏԻ ՍԿՍԻՆ ՓՈԽԱԳՐԱԿԱՌՔԵՐ
ԱՇԽԱՏԻԼ ԴԷՊԻ ՇՈՒՇԻ ԵՒ ԱԿՆԱ**

Ազրայեան 24 յունւարէն սկսեալ փոխադրակառքային երթուղի կը բանայ Պաքուէն դէպի Շուշի եւ Ակնա (Աղսամ): Այս մասին կը հաղորդէ «Սփուլնիք Ազրայեան»-ը:

Այնտեղ կրնան մեկնիլ միայն որոշակի կարգի քաղաքացիներ, որոնք յատուկ արտօնութիւններ ստացած են: Նախ եւ առաջ աստիկա կը վերաբերի այդ տարածքներուն մէջ աշխատողներուն:

Միւս ցանկացողներուն պիտի արտօնուի աստիկա ընել տարին մէջ անգամ՝ դժբախտ պատահարներէն ապահովագրման գոյութեան պարագային:

Փոխադրակառքներուն պիտի ուղեկցի ոստիկանութիւնը:

Ուղեւորին մուտքի յատուկ արտօնութեան, ինչպէս նաեւ «Զորոնա»



ժախրի դէմ պատուաստումներու մասին տեղեկութիւնը մեքենայական կերպով պիտի ներդրուի տուեալներու շտեմարանին մէջ:


Շուշին եւ Ակնան Արցախի Հանրապետութեան այն բնակավայրերն են, որոնք 2020-ի զինուորական յարձակումին հետեանքով բռնագրաւուելով անցան Ազրայեանի տիրապետութեան տակ:

**ԱԶՐՊԷՅՃԱՆԱԿԱՆ ԿՈՂՄԻՆ ՆԱԽԱՋԵՌՆՈՒԹԵԱՄԲ
ՏԵՂԻ ՈՒՆԵՅԱԾ Է ՓՈՒԹԻՆ-ԱԼԻԵԻ
ՀՆՈՒՋԱՅՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՅՈՒԹԻՒՆ**

Ազրայեանական կողմին նախաձեռնութեամբ Ռուսիոյ նախագահ Վլատիմիր Փութին հեռաձայնային հաղորդակցութիւն ունեցած է Ազրայեանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Այս մասին կը հաղորդէ Զեմլինի կայքը:

Կը հաղորդուի, որ հաշուի առնելով Իլհամ Ալիեւի վերջերս Ուքրանիա կատարած այցելութիւնը, քննարկուած են փակուղիի մէջ յայտնուած ներուրանական կարգաւորման հարցերը: Փութին խօսած է Միացեալ Նահանգներու եւ անոնց դաշնակիցներուն հետ Ռուսիոյ անվտանգութեան ապահովման երաշխիքներու տրամադրման հարցերուն շուրջ իր հաղորդակցութիւններուն մասին:

Դազպաստանի մէջ տեղի ունեցած վերջին իրադարձութիւններուն շուրջ միտքերու փոխանակութեան ընթաց-



քին գոհունակութիւն յայտնուած է, որ կացութիւնը արագօրէն կայունացած է, մասնաւորաբար՝ ՀԱՊԿ-ի խաղաղապահ ուժերու ներկայութեան շնորհիւ: Հաստատուած է ռուս-ազրայեանական ռազմավարական գործընկերութեան հետագայ ամրապնդման մտադրութիւնը:

**ԷՐՏՈՂԱՆ. «ԻՍՐԱՅԷԼԻ ՆԱԽԱԳԱՀԸ ԿՐՆԱՅ ԹՈՒՐԲԻԱ ԱՅՅԵԼԵԼ,
ԵՒ ԹԵԼ ԱՒԻԻ ՀԵՏ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՄԵՁ
ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ԿԱՐԵԼԻՈՒԹԻՒՆ ԳՈՅՈՒԹԻՒՆ ՈՒՆԻ»**

Թուրքիոյ նախագահը յայտնեց, որ ինք հաղորդակցութեան մէջ է Իսրայէլի նախագահ Իսհաք Յերցոցի հետ՝ նշելով, որ Իսրայէլի նախագահը կրնայ Թուրքիա այցելել: Այս մասին հաղորդեց «Անատոլու» լրատու գործակալութիւնը:

Էրտողան նաեւ ակնարկեց Իսրայէլի հետ Արեւելեան Միջերկրականի մէջ գործակցութեան կարելիութեան՝ նշելով, որ նպատակը դրական մօտեցումի ճամբով յառաջընթաց արձանագրելն է: «Մեր կարելին պիտի ընենք, եթէ աստիկա փոխադարձ շահի վրայ հիմնուած է», աւելցուց ան:

**ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՅ
ՆԱԽԱՐԱՐԸ ԱՆԸՆԳՈՒՆԵԼԻ ՆԿԱՏԵՅ
ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԿՈՂՄԷ ՎԱԼԵՐԻ
ՓԵՔԵՐԵՍԻ ՆԿԱՏԱՄԲ ՎԵՐԱԲԵՐՈՒՄԸ**

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար Ժան Իվ Լը Տրիան անընդունելի նկատեց Ազրայեանի նախագահ Իլհամ Ալիեւի յայտարարութիւնները, ինչպէս նաեւ Ազրայեանի կեցածքը՝ Ֆրանսայի Իլ տը Ֆրանս կեդրոնական շրջանի դեկավար, Ֆրանսայի նախագահական ընտրութիւններուն առաջադրուած թեկնածու Վալերի Փեքրեսի հասցէին:



Շաբ.ը՝ էջ 8

**ՌՈՒԲԻՆԵԱՆ «ԹՈՒՐԲԻՈՅ
ՆԵՐԿԱՅԱՅՈՒՑԻՉԻՆ ՀԵՏ ԿԸ ՓՈՐՁԵՆՔ
ՔՆՆԱՐԿԵԼ ԴՐԱԿԱՆ ՀԱՐՅԵՐԸ»**

Երեկ՝ երեքշաբթի, 18 յունւար 2022-ին, Ազգային ժողովին մէջ լրագրողներուն հետ ունեցած զրոյցին ընթացքին Հայաստան-Թուրքիա յարաբերութիւններու կարգաւորման գործընթացի յատուկ ներկայացուցիչ, Ազգային ժողովի



Շաբ.ը՝ էջ 8

**«ՌՈՒՍԻԱՆ ՄՏԱՀՈԳ Է, ՈՐ ԵԱՀԿ-Ի
ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ
ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐԸ ՉԵՆ ԿՐՆԱՐ
ԱՅՅԵԼԵԼ ՂԱՐԱԲԱՂ»**

Կ'ԸՍԷ ԼՈՒՔԱՇԵԻՉ

Ռուսիան մտահոգ է, որ ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահները չեն կրնար այցելել Հարաբաղ: «Արմենփրես»-ի հաղորդումով, առցանց մամլոյ ասուլիսի ընթացքին այս մասին նշած է ԵԱՀԿ-ի մէջ Ռուսիոյ մնայուն ներկայացուցիչ Ալեքսանտր Լուքաշեւիչ:

Շաբ.ը՝ էջ 4



**ԱՆԴՐԱՂԱՌՆԱԼՈՎ
ԱԼԻԵՒԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ՝**

**«ԿԸ ՎԵՐԱՀԱՍՏԱՏԵՆՔ ԼԻԱԿԱՏԱՐ
ԱԶԱԿՅՈՒԹԻՒՆԸ ՄԻՆՍՔԻ ԽՄԲԱԿԻ
ՀԱՄԱՆԱԽԱԳԱՀՆԵՐՈՒՆ»**

Կ'ԸՍԷ ԵԱՀԿ-Ի ՆԱԽԱԳԱՅՈՒԹԻՒՆԸ



Եւրոպայի անվտանգութեան եւ համագործակցութեան կազմակերպութեան (ԵԱՀԿ) գործող նախագահութիւնը կը վերահաստատէ իր լիակատար աջակցութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներուն:

Շաբ.ը՝ էջ 4

ՊԵՐՐԻ ՄԱՌԻԼԱՌԻԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ԵՐԿՐԻՆ ԻՐԱԳԱՐՉՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Խորհրդարանի նախագահ Նեպիի Պերրի երեկ Այն Թինի մեջ ընդունեց ներքին գործոց եւ քաղաքապետությանց հարցերու նախարար Պասսամ Մաուլուին, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս ապահովական իրավիճակը:

Հանդիպումէն ետք Մաուլուի մեկնեցաւ առանց մեկնաբանութիւն կատարելու:

ԴԱՏԱԽԱՉ ՂԱՏԱ ԱՌԻՆ ԱՐԳԻԼԵՑ ՌԻԱՏ ՍԱԼԱՄԷՆ ԻՐ ԲՈԼՈՐ ԿԱԼՈՒԱԾՆԵՐՆ

ՌԻ ԻՆՔՆԱՇԱՐԺՆԵՐԸ ԳՈՐԾԱԾԵԼԷ

Լեռնալիբանանի վերադատ ատենախօսող ղաթախազ Ղատա Առն, որ նախապէս արգիլած էր Կեդրոնական դրամատան կառավարիչ Ռիատ Սալամէի օղային, ծովային թէ ցամաքային ճամբորդութիւնը, երեկ արգիլեց զայն բոլոր կալուածներն ու ինքնաշարժները գործածելէ՝ հիմնուելով «Ժողովուրդը կ'ուզէ վարչակարգը բարեկարգել» կոչող խմբաւորումին ներկայացուցած բողոքին վրայ:



ՄՈՍԿՈՎԱՅԻ ՄԵՋ

ԺՈՄՊԼԱԾ - ԼԱԻՐՈՎ ՀԱՆԳԻՊՈՒՄ



Ընկերվար յառաջդիմական կուսակցության ղեկավար Ուալիտ Ժոմպլաթ երեկ Մոսկուայի մէջ հանդիպում մը ունեցաւ Ռուսիոյ արտաքին գործոց նախարար Սերկէյ Լաւրովի հետ:

Հանդիպումին մասին Ժոմպլաթ յայտնեց, որ Լաւրովի հետ հանդիպումը եղած է անկեղծ ու մտերմիկ՝ աւելցնելով, որ անոր ներկայ գտնուած են Ռուսիոյ արտաքին գործոց փոխնախարար Միխայիլ Դոկտանով եւ Ընկերվար յառաջդիմական կուսակցության անդամ Հալիմ Ապու Ֆախրետտին:

ԺԸՊ ԺԸՆԻՆԻ ՄԷԿ ԴՐԱՄԱՏԱՆ ՊԱՇՏՈՆԵԱՆԵՐԸ՝ ՊԱՏԱՆԴ



Ժըպ Ժընկինի դրամատուներէն մէկուն մէջ պահ դրուած գումար ունեցող քաղաքացի մը երեկ պատանդ վերցուց դրամատան պաշտօնեաները եւ սպառնաց զանոնք պէնզինով հրկիզել, եթէ իր ունեցած ամբողջ գումարը՝ 50 հազար տոլարը չվերադարձուի իրեն:

Գումարը ստանալէն ետք Նշեալ քաղաքացին ազատ արձակեց պաշտօնեաները եւ ինքզինք յանձնեց ապահովութեան ուժերուն, որոնք այս միջադէպին շուրջ հետաքննութիւն բացին:

ՎԱՐՉԱՊԵՏ ՄԻՔԱԹԻ ՔՆՆԱՐԿԵՑ ԿՐԹԱԿԱՆ ՄԱՐԶԸ ՅՈՒԶՈՂ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Նեմիյա Միքաթի երեկ վարչապետարանին մէջ նախագահեց հանդիպումի մը, որուն ընթացքին քննարկուեցան կրթական մարզը յուզող հարցեր:

Հանդիպումին ներկայ գտնուեցան կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապպաս Հալապի, կրթական հարցերու խորհրդարանական յանձնախումբի նախագահ, երեսփոխան Պահիա Հարիրի, ինչպէս նաեւ կրթութեան նախարարութեան ընդհանուր տնօրէն Ֆատի Եարաք եւ Միքաթիի խորհրդատու Չիատ Միքաթի:

Քննարկուեցան կրթական մարզը յուզող հարցերն ու դժուարութիւնները, ինչպէս նաեւ ուսուցիչներուն պահանջները:

Վարչապետ Միքաթի ընդունեց Լիբանանի մէջ Ֆրանսայի դեսպան Անն Կրիոն, որուն ընկերակցեցան Միքադային դրամական ֆոնտի փորձագետ Բլեման Սթիգը եւ Ֆրանսայի ելեւմուտքի փոխնախարար Ուիլիամ Ռուզը: Ներկայ գտնուեցան նաեւ փոխվարչապետ Սաատ Շամի:



Հանդիպումին ընթացքին գնահատուեցաւ կառավարութեան խիստեղ վերսկսելու որոշումը, որ առիթ պիտի տայ քննարկելու պետական ամսվարը, որ երկրին տնտեսութեան ապաքինման հիմնաքարը կը նկատուի:

Կրիո շեշտեց, որ Ֆրանսա կը զօրակցի Լիբանանի կառավարութեան՝ տնտեսական ապաքինման ծրագիրին առումով՝ նկատի ունենալով, որ անոր հիման վրայ պիտի սկսին Միքադային դրամական ֆոնտին հետ քննարկումներն ու բանակցութիւնները:

Վարչապետ Միքաթի այցելեց նաեւ երեսփոխան Սամիր Ժաըր. քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւններն ու Թրիփոլի վերաբերող շարք մը հարցեր:

ՄԻԻՖԹԻ ՏԵՐԻԱՆ ԵՒ ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԵՄՔԵՐ ԿԸ ՇԱՐՈՒՆԱԿԵՆ ԴԱՏԱՊԱՐՏԵԼ ԱՊՈՒ ՏԱՊԻՒ ՎՐԱՅ ԿԱՏԱՐՈՒԱԾ ՅԱՐՉԱԿՈՒՄԸ

Հանրապետութեան միւֆթի շէյխ Ապտիլ Լաթիֆ Տըրիան երեկ խստի դատապարտեց Ապու Տապիի վրայ կատարուած յարձակումը՝ զայն նկատելով անարգ ոճիւր, որ մաս կը կազմէ Սեուտական Արաբիոյ եւ Շոքի այլ երկիրներու վրայ կատարուած ահաբեկչական յարձակումներուն շարքին:

Միւֆթի Տըրիան յայտնեց, որ Սեուտական Արաբիոյ կամ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն կամ Շոքի երկիրներուն վրայ կատարուած որեւէ յարձակում բոլոր արաբներուն եւ իսլամներուն վրայ յարձակում կը նկատուի:

Հանրապետութեան միւֆթի հաստատեց, որ Տար Ֆաթուայի կեցուածքը հաստատ է եւ վճռական՝ ահաբեկչական գործողութիւններուն դէմ, որոնք դատապարտուած են, որովհետեւ թիրախ կը դարձնեն մեզի բոլոր երկիրներն ու պետութիւններ, որոնք միշտ աջակցած են Լիբանանին եւ լիբանանցիներուն:

Նախկին վարչապետ Ֆուատ Սիւրիորա խստի դատապարտեց Արա-

բական Միացեալ Էմիրութիւններուն վրայ կատարուած յարձակումն ու բռնարարները՝ հաստատելով, որ ահաբեկչական այս արարքը կը նպաստէ Իսրայէլի, ինչպէս նաեւ արաբ եւ իսլամ ժողովուրդներու շահերու:

Ժողովրդավարական հանդիպում պլոքի երեսփոխան Ուալ Լապու Ֆաուր զօրակցութիւն յայտնեց Արաբական Միացեալ Էմիրութիւններուն՝ իբրեւ դեմակարգութեան, ժողովուրդ եւ հաստատութիւններ:

Ընկերվար յառաջդիմական կուսակցութիւնը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որ կը Նշէ, թէ կուսակցութիւնը խստի կը դատապարտէ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն ապահովական կայունութիւնը ցնցելու արարքները:

«Ապու Տապիի վրայ կատարուած յարձակումը դատապարտելի է: Կոչ կ'ուղղենք վերջ տալու նման յարձակումներուն կրկնութեան եւ չղաչելու Շոքի երկիրներուն ապահովութեան», կը Նշէ հաղորդագրութիւնը:

ԱՅՍՕՐ ԼԻՔԱՆԱՆ ԿԸ ՀԱՄՆԻ «ՀԻՊԱ» ԶԻՒՆԱՄՐՐԻԿԸ

Պէյրութի միջազգային օդակայանի օդերևութաբանական գրասենեակը հաղորդեց, որ Լիբանան այսօր առաւօտեան կանուխ ժամերուն պիտի դիմաւորէ «Հիպա» ձկնամորրիկը, որուն ուժգնութիւնը պիտի երկարի մինչեւ հինգշաբթի:

Ըստ Օդերևութաբանական գրասենեակին, այսօր առաւօտ անձրեւներ պիտի տեղան: Ցերեկը ծովու մակերեսէն 1100 մետր բարձրութեան վրայ պիտի ձիւնէ, իսկ գիշերը՝ ծովու մակերեսէն 700 մետր բարձրութեան վրայ:

Օդերևութաբանական գրասենեակը զգուշացուց քաղաքացիները, որ սաստիկ հովը կրնայ պատճառ դառնալ պատահանքներու իյնալուն, ինչպէս նաեւ ծովուն ալիքները կրնան մինչեւ 5 մետր բարձրանալ:

Հինգշաբթի օրուան նախատեսումներուն համաձայն, ջերմաստիճանը շատ աւելի պիտի նուազի եւ 600-700



մետր բարձրութեան վրայ պիտի ձիւնէ: Ապահովութեան ուժերը քաղաքացիներէն պահանջեցին, որ լեռնային շրջաններուն մէջ ձիւնելէ ետք, անոնք հետեւին իրենց ցուցմունքներուն, եւ եթէ ստիպուած չեն, խուսափին լեռնային ճամբաներ ուղղուելէ:

Իսկ կրթութեան եւ բարձրագոյն ուսման նախարար Ապպաս Հալապի ըսաւ. «Նկատի ունենալով օդերևութաբանական պայմանները՝ կրթական հաստատութիւններու տնօրէններու հայեցողութեան կը ձգեմ իրենց հաստատութիւնները բաց պահելու կամ փակելու որոշումը»:

LEBANON EXECUTIVE TRAINING ESTABLISHMENT

is pleased to offer technical tax services to all those who need assistance in preparing & completing their US tax returns (Tax return 1040) & filing those returns with the US Tax authorities to comply with the filing deadline of 18 April 2022.

For our fees to complete & present the tax returns & further information, kindly call the following number 00961 71 060367.

ՊՈՒԶԻՔԵԱՆ ՔՆՆԱՐԿԵՑ

ՃԱՐՏԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹԵԱՆ ԵՒ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԴՐԱՄԱՏԱՆ ՄԻՋԵՒ

ԳՈՐԾԱԿՅՈՒԹԵԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԸ



Ճարտարարուեստի նախարար Ճորճ Պուչիքեան երեկ նախարարութեան կեդրոնատեղիին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Միջազգային դրամատան ներկայացուցիչ Սարուժ Քումարճահը, որուն հետ քննարկեց ճարտարարուեստի նախարարութեան եւ Միջազգային դրամատան միջեւ գործակցութեան միջոցները՝ գործադրելու համար այնպիսի ծրագիրներ, որոնք ուղղակիօրէն առնչուած են ելեկտրոնային գործառնութիւններուն, ինչպէս նաեւ բարելաւելու համար կարգ մը արդիւնաբերական մարգեր, ինչպէս՝ դեղորայքի եւ պատուաստներու արտադրութիւնը:

ՌԱՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ԸՆԴՈՒՆԵՑ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ

Մարոնի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երեկ Պերքեի մէջ ընդունեց առողջապահութեան նախարար Ֆիրաս Ապիատը, որուն հետ քննարկեց երկրին առողջապահական կացութիւնը, յատկապէս «Քորոնա» համաճարակին տարրողութիւնը:

Հանդիպումէն ետք Ապիատ յայտնեց, որ լիբանանեան պետութեան կարողութիւնները սահմանափակ են համաճարակը դիմակալելու՝ աւելցնելով, որ լիբանանցիներուն բուժման եւ դեղորայքի կարիքը մեծ է:

Ապիատ յայտնեց, որ առողջապահութեան նախարարութիւնը ամէն ջանք ի գործ կը դնէ օժանդակելու քաղաքացիներուն՝ լուծելու համար անոնց դիմագրաւած առողջական հարցերը:

Ապիատ Նշեց, որ Ռայի պատրիարքին ներկայացուցած է «Քորոնա»-ի համաճարակին արձանագրած զարգացումները՝ հաստատելով, որ «Քորոնա» ժահրին դէմ պատուաստումը կը շարունակուի:

Ան նկատել տուաւ, որ «Քորոնա» ժահրով վարակուած այն քաղաքացիները, որոնք պատուաստուած են՝ թեթեւ ախտանշաններով է, որ կ'ապաքինին, իսկ չպատուաստուած քաղաքացիներն են ընդհանրապէս, որոնք ծանր կ'անցընեն իրենց վարակումը:

Ապիատ շեշտեց, որ կը նախատեսուի «Քորոնա» ժահրով վարակուածներու թիրին նուազումը՝ ընդգծելով, որ անձնական հիւանդանոցները իրենց կարգին պետք է «Քորոնա» ժահրով վարակուածներու յատուկ բաժանմունքներ ունենան եւ հիւանդները ընդունին:

Ան աւելցուց, որ առողջապահութեան նախարարութիւնը բացած է Պիելի իր շտապ օգնութեան կեդրոնը եւ հոն կ'ընդունին մեծ թիւով վարակուածներ, որոնք Լեռնալիբանանէն եւ Պէյրութէն են:

ԼԻՔԱՆԱՆԵԱՆ ԿԱՐՃ ԼՈՒՐԵՐ

●ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹԵԱՆ նախարարութեան տեղեկութիւններուն համաձայն, Լիբանանի մէջ նախորդ 24 ժամուան ընթացքին արձանագրուած են «Քորոնա» ժահրով 7592 վարակուածներ եւ մահացած 15 ուրիշներ:

●ՍԵՒ շուկային մէջ ամերիկեան տոլարի փոխարժեքը նուազեցաւ 25.000 լ. ոսկի:

●ԱՐՏԱՔԻՆ գործոց եւ արտերկրի լիբանանցիներու հարցերու նախարար Ապտալա Պու Հապիպ Լիբանանի մէջ Եւրոպական Միութեան դեսպան Ռաֆ Թրաֆի եւ Միացեալ Նահանգներու դեսպանատան գործավար Ռիչըրտ Մայքըլգի հետ քննարկած է յառաջիկայ գարնան տեղի ունենալիք երեսփոխանական ընտրութիւններուն ընթացքին արտերկրի լիբանանցիներուն քուէարկելու դրութիւնն ու ընտրութիւնները ֆինանսաւորելու հեռանկարները:

●ՈՒԺԱՆԻԹԻ նախարարութիւնը երեկ հրապարակեց վառելանիւթի նոր սակացոյցը, որուն համաձայն, վառելանիւթի բոլոր տեսակներուն սակերը նուազում արձանագրած են: Ըստ սակացոյցին, 95 օջթան պենզինի թիթեղին սակն է 362.400 լ. ոսկի, 98 օջթան պենզինը՝ 374.400 լ. ոսկի, մագլոքը՝ 332.600 լ. ոսկի, իսկ պիւթակազի շիշը՝ 291.000 լ. ոսկի:

●ԿԵՆՍՈԼՈՐՏԻ նախարար Նասեր Եսպին շեշտեց, որ ամէն ջանք ի գործ պետք է դնել՝ կանխարգիլելու համար աղբահանման նոր տագնապ մը:

●ԵՐԵՍՓՈԽԱՆ Ֆայսալ Զարամէ յայտնեց, որ «Եթէ Թրիփոլի մէջ ՏԱՅԵԸ-ի գոյութեան վերաբերող լուրերուն նպատակը երեսփոխանական ընտրութիւնները յետաձգել է, ապա մենք կը մերժենք, որ անիկա քաղաքին հաշուոյն կատարուի»:

ՏԵՍԱԿԷՏ

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ. ԱՐԴԻ ԹՈՒՐՔԻՈՅ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՍԱՐԹԻՆ ԼՈՒԹՈՐ ՔԻՆԿԸ



«Դժուար է հայ ըլլալ Թուրքիոյ մէջ, կամ՝ քիւրտ, կամ՝ աւելի, կամ՝ միասեռական, կամ՝ զինուորական ծառայութենէ կրօնական համոզումներու համար հրաժարող, կամ՝ հրեայ, կամ՝ կիկն, կամ՝ մէկը, որ պարզապէս համաձայն չէ այն ամենուն հետ, ինչ տեղի կ'ունենայ երկրին մէջ։ Եթէ պատահի այնպէս, որ դուք թուարկուածներն մէկէն աւելիին կը համապատասխանէք, կեանքն ա՛լ աւելի կը դժուարանայ։ Ցանկը կարելի է անվերջ շարունակել։ Բազմազանութիւնը խեղդուած է, խօսքի ազատութիւնը՝ վերցըւած»։

ԷԼԻՖ ՇԱՏԱՔ, թուրք արձակագիր

Միացեալ Նահանգներու բազմազանութեան, բազմամշակութայնութեան, լայնախոհութեան եւ ազատական-ժողովրդավարական համակարգի գըլ-խաւոր ռաիվիրաները եղած են անոնք, որոնք Նախորդ դարու 60-ական թուականներուն անդուլ պայքար մղած են ընդդէմ ցեղային ու գոյնի պատկանե-լիութեան վրայ հիմնուած խտրական համակարգին։

Միացեալ Նահանգները՝ իբրեւ պետական հաստատութեանկան ըմբռնողականութիւն, որ ծնունդ առաւ ընդդէմ բրիտանական գաղութատիրութեան ծաւալած յեղափոխութեան մը շնորհիւ, կրցաւ (թէեւ՝ որոշ չափով, որովհետեւ ներկայիս կը դիմագրաւէ որոշ մարտահրաւերներ) շրջանցել ընկերայնօրէն հաստատուած ցեղային ու գոյնի պատկանելիութեան վրայ հիմնուած խտրական օրէնքները՝ սկսե-լով ստրկութեան ջնջումէն մինչեւ սեւամորթներուն համար քուէարկութեան իրաւունքի ապահովումը եւ կեանքի բոլոր մարզերուն մէջ ամէն տեսակի հաստատութեանկանացած խտրութիւններուն ջնջումը։

Յառաջիկայ տարի (2023) 29 հոկտեմբերը կը զուգահիւյի Թուրքիոյ Զանրապետութեան հիմնադրու-թեան 100-ամեակին։

Արդեօք Թուրքիոյ Զանրապետութիւնը պիտի կա-րենա՞յ (ինչպէս Միացեալ Նահանգները կրցան) վերջ տալ տարիներու ընթացքին (այսինքն՝ հանրապե-տութեան կերտման օրէն ի վեր) Զայոց ցեղասպա-նութեան ժխտման եւ այդ հանրապետութեան հպա-տակ բնկի (հայ) ժողովուրդին նկատմամբ ցեղա-պաշտ ու խտրական քաղաքականութիւններուն, որոնց պատճառով ալ այդ ժողովուրդը ենթարկուե-ցաւ ցեղասպանութեան, կալուածներու բռնագրաւ-ման, բռնի տեղահանումի եւ թրջացման։

Պետութիւններու հիմնադրութեան 100-ամեակնե-րը ընդհանրապէս անկիւնադարձային կ'ըլլան անոնց համար։ Անկիւնադարձային կ'ըլլան, որովհե-տեւ այդ յօբելէանները առիթ կ'ընծայեն քննարկելու պատմական սխալները եւ փորձ կատարելու սրբա-գրելու գանկը։

Արդեօք թրջական ղեկավարութիւնը պիտի ունե-նա՞յ՝ բարոյական յանձնառութիւնը, որ ուներ Ապրա-համ Լինքըլնը, որ ջնջեց ստրկութիւնը 1865-ին, եւ իր կարգին ճանչնայ Զայոց ցեղասպանութիւնը, ներում հայցէ թէ՛ Օսմանեան կայսրութեան եւ թէ՛ ալ ներկայ հանրապետութեան հարիւր տարիներու ընթացքին հետեւողականօրէն կիրարկուող ժխտողական եւ ցե-ղապաշտ քաղաքականութիւններուն համար։

Արդեօք Թուրքիան պիտի ունենա՞յ Լինտըն ճոն-սընի նման պետական ղէկավար, որ 1964-ին ստո-րագրեց քաղաքացիական իրաւունքներու որոշումը, իսկ 1965-ին՝ քուէարկութեան իրաւունքներու որոշու-մը։ Որոշումներ, որոնք ազատագրեցին սեւամորթ-ները աւելի քան հարիւր տարի տեւած ցեղային զըր-կանքներէ ու խտրականութենէ։ Պիտի ունենա՞յ ղե-կավար մը, որ իր կարգին վերջ դնէ հայերուն եւ բո-լոր փոքրամասնութիւններուն նկատմամբ ատելու-թեան ու ամէն տեսակի ցեղապաշտ դրսեւորումե-րուն։

Արդեօք Թուրքիան պիտի ունենա՞յ այնպիսի քա-ղաքական գործիչներ, ինչպէս՝ Ապրահամ Լինքըլն, ճոն Բենետի, Լինտըն ճոնսըն եւ Ռոպըրթ Բենետի, որոնք ճիգ թափեցին պետական հաստատութիւննե-րու միջոցով հաւասարութիւն հաստատող ու խտրա-կանութեան յաղթահարման օրէնսգիրքեր որդեգրե-լու։ Արդեօք պիտի ըլլա՞ն թուրք քաղաքական գոր-ծիչներ, որոնք իրենց կարգին որդեգրեն Զայոց ցե-ղասպանութիւնը ճանչցող, բռնագրաւուած կալ-ւածներու հատուցման եւ ազգային ու կրօնական իրաւունքներու եւ ազատութիւններու ապահովման օրէնքներ։

Ոչ ոք կրնայ ժխտել ընկերային այն պայթումը, որ տեղի ունեցաւ Միացեալ Նահանգներու մէջ Մարթին Լութըր Բինկի պաւնութենէն ետք (1968)։ Պայթում մը, որ ոտքի հանեց սպիտակամորթն ու սեւամորթը հաւասարապէս՝ յանուն հաւասարութեան եւ լայ-նամտութեան։

ՆԱՅՈՆ ՊԵՏՐՈՍԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ - 15-ԱՄԵԱԿ ԵՒ ԴԱՏԱՎՃԻՈՆՆԵՐՈՒ ՏԵՍԱԿԱՆԻ (19 ՅՈՒՆԻՈՒՐ 2007)



... Պոլսոյ 14-րդ դատարանը Զրանդ Տինքի սպա-նութիւնը վերագրած է Կիւլենի «Հիմգեթ» շարժու-մին՝ մասնաւորաբար ոստիկանութեան նախկին բարձրաստիճան կարգ մը սպաներու։

(«Ազդակ», 16-7-2021)

Իր նահատակութենէն ասդին, հայ մամուլը մօ-տեն հետեւեցաւ, քննութեան առարկայ դարձուց եւ համապարփակ լրատուութիւն թէ վերլուծութիւններ լոյսին բերաւ, պարզապէս մոռացութեան չտալու Զրանդ Տինք անունը, անոր դատական գործընթացը, իր կատարած գործին մեծութիւնն ու սերունդներու յիշողութեան մէջ անոր թողած ժառանգը։

Իսկ ո՞վ էր այս անձնաւորութիւնը, որ իր մասին այսքան մէյան հոսեցուց՝ իր ողջուց թէ նահատակու-թենէն ետք։ Ինչո՞վ կը տարբերէր ան ուրիշներէ, իբ-րեւ հայ լրագրողի թէ հասարակական գործիչի, ազ-գային կեանքի նուիրելալի, մանաւանդ՝ արդարու-թեան ձայնի թունդ հաւատացողի, եւ որոնց պատ-ճառով ան իր կեանքը մատոյց ճշմարտութեան բա-զինի։

Զրանդ Տինք։

Զայաշունչ որբանոցի մը մէջ հասակ առած այն տղան էր, որ հետագային կրցաւ նուաճել բազմահա-գար մարդոց (հայ-թուրք-քիւրտ) սրտերն ու մտքերը, շնորհիւ իր հայադրոշմ կերպարին, խիզախութեան, յանդուգն խօսքին եւ աներէր կամքին։

Փաստօրէն, իր նահատակութենէն տասնամեակ մը առաջ արդէն ան երեւոյթ մը դարձած էր պոլսա-հայ իրականութեան մէջ թէ ամբողջ Թուրքիոյ տա-րածքին։ Ան կրցած էր շատ արագ իր ներկայութիւնը արմալնդել, յատկապէս հասարակական կեանքի մէջ, երբ առանց երկմտանքի կը նետուէր պայքարի դաշտ յանուն խօսքի ազատութեան։

Կարծես բաւարար չէր պոլսահայ իրապարակա-գիրի իր կոչումը, գրիչին ապաւինած՝ արտայայտե-լու իր մտածումներն ու համոզումը, ան յանձն կ'առ-ներ, սապէս քարոզիչի ցուպը ձեռին՝ իջնել ժողո-վուրդի գիրկը եւ երկխօսութեան դիմել։

Կրնանք հարց տալ, թէ ուրկե՞ անոր այսքան քա-ջարի եւ խրոխտ կեցուածքը, երբ ան ժողովրդական լսարաններու թէ ակադեմական շրջանակներու մէջ, տարբեր հարթակներու թէ թրջութեան որջի սրտին, այնքան համարձակ կը խօսէր այնպիսի նիւթերու մասին, որոնք, այսպէս ըսած, արգիւրուած էին Թուր-քիոյ տարածքին, աւելի քան հարիւր տարիէ։ Զրանդ Տինքի ներշնչման աղբիւրը ո՞վ էր, կամ անոր մտքին մէջ ովքե՞ր սնուցած էին այնպիսի պատմական ճոշ-մարտութիւններ, որոնք հաւատամքի եւ ամուր հա-մոզումի վերածուած էին իրեն համար եւ զինք մղած արդարութեան կանգը ըլլալու։

Ըսինք, որ Զրանդ Տինք երեւոյթ մը կը հանդիսա-նար, որովհետեւ ան առանց վախի կը բարձրաձայ-ներ Զայոց ցեղասպանութեան եւ ինքնութեան մա-սին։ Անոնք երկու անկորչելի եւ համարժեք ազդակ-ներ էին Պոլսոյ «Ակօս» թերթի գլխաւոր խմբագիրին համար, որոնցմով ան պիտի կարենար իր պատմա-քաղաքական տեսակետներն ու վերլուծութիւնները հանրութեան ներկայացնել՝ շեշտադրելով հայ-թուրք դարաւոր թշնամութիւնը, պատճառներն ու հետե-ւանքները։

Միւս կողմէ, սակայն, մտահան պէտք չէ ընել Նա-եւ այն, որ Զրանդ Տինք ջերմ ջատագովն էր հայ-թուրք երկխօսութեան եւ իրերհասկացողութեան, անշուշտ, լոյսին բերելէ ետք պատմական ճշմար-տութիւնները, երկու ժողովուրդներու անցեալի դառն յիշողութիւնները եւ Արեւմտահայաստանի դատը։

Եւ ահա, ժամանակ մը ետք, թրջութիւնը իր բար-բարոսային դիմակով հանդէս կու գար եւ օր ցերեկով կը սպաններ հայ խմբագիրը իր իսկ խմբագրատուն դիմաց։ Զստմելի ոճիւր մը, որ գործադրուեցաւ, այս-պէս ըսած, անչափահաս Օկին Սամասթի ձեռամբ, Եասին Զայալի ուղղակի մեղաւկցութեամբ եւ Թուի-ջելիի՝ ոճիրի մտայղացմամբ։

Երկարատեւ ձգձգումներու, խեղաթիւրումներու եւ դիտաւորեալ դատական գործընթացներու յե-տաձգումներէ ետք, յունիս 2019-ին, վճիռը կ'արձակ-ւեր եւ իր լրումին կը հասնէր դատական գործընթաց մը, որ շփոթի մատնած էր նոյնինքն թուրք հասարա-կութիւնը։

Ժիշդ է, որ Զրանդ Տինքի պաշտպան փաստա-բաններու ոգի ի բռին աշխատանքը ձեւով մը ար-դիւնքի կը հասնէր, այդուամենայնիւ, հարցի եութիւ-նը կը մնար անլոյծ, գործուած ոճիրին տարողութիւ-նը նսմնացուած, իսկ սպանութեան ետին կանգնող ուժին իսկական դիմագիծը թաքուն եւ պաշտպանը-ւած։ Թուրքիոյ խորունկ պետութեան կարգն ու սար-քը կը յաջողէր լուութեան մատնել արդարութեան ձայնը։

Բուն ոճրագործը կ'արդարացուէր եւ գերծ կը մնար ամէն տեսակի մեղադրանքէ եւ հաշուետուու-թենէ։ Այլ խօսքով, այս աշխարհին ներկայացուած թուրք զազրութեան յայտան դիմակները՝ Երկենե-քոն, Գորշ գայլեր թէ հայատեացութեամբ յագեցած (թաքուն կառոյցներ), այլապէս «անմեղի» պատմու-ճանը հանդերձած՝ յորդորներ կը կարդային ամբողջ մարդկութեան։

ԶԱՄԲԻԿ ԴԻԼԱԼԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ՍԼԱՔ

ԲԱՐԵԿԱՄԻՍ «ԽԵԼՔԸ ԶԻ ԿՏՐԵՐ»...

Տօնական օրերը արդէն մեր ետին են. 2022-ի բացումէն ի վեր աշխարհի տարածքին ու մասնաւորապէս մեր հայրենիքը՝ Զայաստան-Արցախը շա-հագրգռող գօտիներու մէջ տեղի ունե-ցան եւ կը շարունակուին այնպիսի իրադարձութիւններ, որոնք կարգ մը մեկնաբաններու կողմէ կը դիտուին (իբր թէ) «աշխարհը դէպի նոր համա-կարգ կ'ուղղուի» բնորոշումով։ Կար-ծեք թէ աշխարհը որեւէ օր, որեւէ շա-բաթ կամ ամիս-տարի դադրած ըլլար «նոր համակարգ»-երու որոնում, այդ նպատակով՝ մահասփիւռ եւ աւերիչ խաղերէ։

Տուեալ պատկերին դիմաց բնական էր, որ Ղազախստանի իրադարձու-թիւններն ու մասնաւորաբար ԶԱՊԿ-ի որոշումով կեդրոնասիական այդ երկի-րը խաղաղարար ուժ դրկելու քայլը լայն պիտի բանար հայրենի (եւ ոչ միայն հայրենի) մեկնաբաններուն ծո-րակները, մանաւանդ որ ԶԱՊԿ-ի այժ-մու նախագահը՝ Զայաստանն ալ խորհրդանշական զօրամատով մը մասնակից եղաւ խաղաղարար նա-խաձեռնութեան. ոմանք ճիշդ նկատե-ցին առնուած քայլը, ուրիշներ հրապա-րակ եկան «Զայաստանը պէտք է ԶԱՊԿ-էն քաշուի»-ի «հանճարաբանու-թիւն»-ներով, իսկ երրորդ խմբաւորու-մի մը ուշադրութենէն չվրիպեցաւ այն, որ հայկական ուժերու մասնակցութիւ-նը իրողապէս կախեալ չէր երեւանի իշխանաւորներուն կամքէն ու տրամա-բանութենէ (ինչպէս որ անոնց հա-կակշիռէն դուրս կը մնայ Զայաստանին առնչուող գրեթէ ամէն զարգացում)։

Եւ.... ի՞նչ զուգահիւյութիւն։ Զանի մը օրէն՝ 14 յունուարին, Զայաստանի եւ Թուրքիոյ ներկայացուցիչները պաշ-տօնապէս բանակցութեան պիտի նըս-տին՝ «գործակցական եջ բանալու» յաւակնութիւններով։

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ



Ամիս մը առաջ էր, որ Ամերիկայէն Երեւան հասած բարեկամիս հետ Զա-յաստանի ծանր դրութեան մասին կը խօսէի։

Լուռ, մինչեւ վերջ լսեց, աչքերը ան-թարթ պահեց, բայց ամէն անգամ որ եղած ծանր դէպքերուն նկարագրա-կանը ընել փորձեցի, երկա՛ր շունչ մը քաշեց...

Նոր աշխարհէն կու գար հայրենա-կիցս, հոգիին մէջ՝ յոյսի վահան եւ մեծ սիրտ մը, որ կը բաբախէր մեր արեան, ցաւի, կորուստներու մեծ տափա-ստաններուն կշռոյթով։

Սիրտը, ինչ էր պիտի ըսէիք, սիրտը ոչ մէկ բան կրնար տալ մզգի, նաեւ այն պատճառով, որ համընդհանուր պար-տութեան հարուածներէն ետք, ցայ-սօր ալ չկարողացանք մէկ գաղափարի շուրջ հաւաքուիլ, մէկ մարդու պէս ոտք-կանգնիլ ու կարեւորագոյնը՝ վաղ-թան համար մեր ընելիքն ու ծրագիրը թուղթին տալ։

Բարդ է մեր վիճակը, ոչ միայն այն պատճառով, որ մեզմէ շատերուն հա-մար պարտութիւն սրբոց համարուող Զադրութն ու Շուշին այլեւս մեր ձեռքը չէն, ոչ ալ՝ մեր հազարաւոր նահա-տակներուն պատճառած ահին հա-մար, այլ՝ անոր համար, որ հաւաքա-կան գիծ մը չունեցանք, ու անկէ վատ ալ՝ մեր ժողովուրդին համար եռանդ ու մկան չխնայող մեր մեծ ընտանիքին բոլոր քայլերը սխալ թարգմանուե-ցան։

Մենք պիտի ուզէի՞նք այս ահասար-տուռ պատկերները, պիտի ուզէի՞նք այս մեծ անկումը եւ, ի վերջոյ, պիտի ընդունէի՞նք, որ մեր արիական ոգիի պահապան հանդիսացող հայոց բա-նակը այսպէս, այս ոճով ծունկի գայ եւ

Այս ենթապատկերը իր անխուսա-փելի տեղն ու դերը ունեցաւ այն գոյո-ցին մէջ, որ ունեցայ տօնական օրերու աւարտին, սրտամօտ բարեկամի մը հետ, բնականաբար՝ հեռաձայնով (հա-մաճարակին նոր ալիքը դարձեալ բան-տարկութեան դատապարտած է մարդկութիւնը)։ Զայաստանի յետպա-տերազմեան իրադարձութեանց շուրջ բաւական թափառելէ, ի միջի այլոց՝ Ղազախստանի, Ուքրաինոյ եւ այլ «տաք գօտիներ»-ու մասին վեր-վար ընելէ ետք, հասանք Զայաստան-Թուր-քիա առաջադրուած բանակցութիւննե-րուն (առանց անտեսելու, որ ստեղծը-ւած պայմաններուն մէջ, մասնաւորա-բար համաթրուրանականութեան ծրա-գիրներուն մէջ Թուրքիա-Ղազախըս-տան լծակցութեան ենթապատկերը նկատի ունենալով, հանդիպումը կըը-նայ առնուազն յետաձգուի)։ Դոս ալ վեր-վար ըրինք բանակցող ներկայա-ցուցիչներու արժանիքներուն եւ սեղա-նին դրուելիք հարցերուն մասին։ Յան-կարծ (ի՞նչ մեղքս պահեմ) սատանան փորս մտաւ եւ չարացայ, գրոյցին տը-լի տարբեր ընթացք.

- Ի մացա՛ր,- հարցուցի լրջութիւն բուրող ձայնով մը.- Զայաստանի վար-չապետը Թուրքիան, հայութիւնն ու ամբողջ աշխարհը ափ ի բերան պիտի ձգէ եղէր բանակցութեան տարուելիք իր թղթածրարով։

- Ի՛նչ կ'ընես,- հարցուց թակարդս ինկածի եղանակաւորումով մը.- այդ ի՞նչ թղթածրար է եղէր...

- Զա՛, հա՛.- պնդեցի նոյն կեղծ լրջու-թեամբ.- Ռ. Ռուքիսեանի տանելիք թըղ-թածրարին մէջ բաւական ուժեղ պա-հանջներ ցանկացրուած են եղէր, ար-տաքին գործոց նախարարութենէն ասանկ լուրեր սպրդէր են եղէր...

Ս. ՄԱՅՄԵՐԵՃԵԱՆ

Շար.ը՝ էջ 6

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ


ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱՐԻՆ

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ ՈՒ ԼԵՌՆՈՏ ԵՐԿԻՐԸ. ԿԱՄ ՆՈՐ ՅՈՅՍԻ ՏԱ

ՎԵՐԱՅՐԱՏԱՐԱԿՈՒԾ Ե ՌՈՒԲԷՆ ՏԵՐ ՄԻՆԱՍԵԱՆԻ ՅՈՅԺ ԱՐԴԻԱԿԱՆ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՄԵԿԸ



Վերահիատարակում է Ռուբեն Տեր Մինասեանի յոյժ արդիական գիրքերէն մէկը՝ «Հայաստանը միջ-ցամաքային ուղիներու վրայ» աշխատութիւնը: Գիրքը կարելոր է յատկապէս աշխարհաքաղաքական կողմնորոշումներու առումով եւ ամբողջական պատկերացում կու տայ մեր տարածաշրջանի եւ Հայկական Լեռնաշխարհի պատմաքաղաքական անցեալին եւ ընթացող իրադարձութիւններուն մասին: Աշխատութիւնը հասկնալի եւ մատչելի դարձնելու նպատակով հրատարակուած է արեղեանական ուղղագրութեամբ:

Ստորեւ կը ներկայացնենք այս կարելոր աշխատութեան վերահիատարակիչ Գագիկ Սարգսեանի ամփոփ նախաբանը՝ գիրքին երրորդ հրատարակութեան առիթով:


«Ռուբեն Տեր Մինասեանի «Հայաստանը միջցամաքային ուղիների վրայ» աշխատութիւնը գրուել է Բ. Համաշխարհային պատերազմի աւարտէն անմիջապէս յետոյ: Այն առաջին անգամ տպագրուել է Պէյրուսում, 1948 թուականին, իսկ երկրորդ անգամ՝ 1982 թուականին, Թեհրանում:

«Երեւնակի սոյն աշխատութիւնը, ըստ էութեան, հանդիսանում է մեր տարածաշրջանի՝ մասնաւորապէս Հայաստան աշխարհի աշխարհաքաղաքական վերլուծութեան առաջին յաջողուած փորձը: Ռուբենը նախքան Հայկական Լեռնաշխարհին անդրադառնալը՝ մանրամասն ներկայացնում է երգչական եւ ասիական երկրների՝ հիմնականում հզօր խաղաղողների շահերն ու նկրտումները, Ասիան Եւրոպային կապող ճանապարհների, Արեւելքի եւ Արեւմուտքի պատմաքաղաքական անցեալի, հակադրութեան, մրցակցութեան հիմնական պատճառներն ու շեշտադրումները եւ այդ ամէնի **համառոտըստում**՝ մեր հայկական շահերն ու անելիքները:

Հայկական Լեռնաշխարհը Ռուբենը ներկայացնում է որպէս բերդ-ամրոց եւ գիտականօրէն հիմնաւորում այդ բերդ-ամրոցի կարելորութիւնը նրան շըրջապատող մերձաւորարեւելեան ու կովկասեան երկրների անվտանգութեան հարցում: Կայ՛ հայկական բերդը, որը անվտանգութեան պատնէշ է հարեւան երկրների համար, ուրեմն կայ խաղաղութիւն հարեւան երկրներում, կայ խաղաղ գոյակցութիւն Մերձավոր Արեւելքում՝ ընդհանրապէս: Ռուբենի կատարած աշխարհաքաղաքական վերլուծութեամբ գիտականօրէն հիմնաւորում է միացեալ Հայաստանի ստեղծման եւ աշխարհասփիւռ հայութեանը նոյն յարկի տակ միաւորելու մեր անցակտելի իրաւունքը, եւ դա էլ այս բարձրաթիւք աշխատութեան հիմնական մէկն է ու նպատակը:

Գրուած լինելով 75 տարի առաջ՝ այն այսօր էլ անելի քան արդիական է. նոյն խաղաղողները, գրեթէ նոյն բաներն ու նպատակները»:

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԾ Ե «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՐԿՐԱՔԱՆԱԿԱՆ ԿՏԱՆՔՆԵՐՈՒ ԳԵՈՊԱՐԿԻ ՍՏԵՂԾԱՆ ՆԱԽԱԴՐԵԱԼՆԵՐԸ» ԳԻՐՔ-ԱՏԼԱՍԸ



Գեոպարկերը աշխարհագրական տարածքներ են, որոնց հիմքին մէջ առանձնայատուկ տեսարժան, երկրաբանական ժառանգութիւնն է, որ կը գոգորդէ պատմական, հնագիտական, մշակութային բաղադրիչներով: **Գեոպարկերը** կը հանդիսանան միակ միասնական աշխարհագրական տարածքները, ուր կարելորութիւն ունեցող բացառիկ երկրաբանական վայրերը եւ մակերես-տարածքները կը կառավարուին հետազօտական, պահպանման, կրթական եւ կայուն զարգացման ամբողջական հայեցակարգով՝ ընդգրկելով տեղական համայնքներու ուժերն ու կարելիութիւնները:

Երկրաբանական զբօսաշրջութեան հեռանկարային զարգացումը լրացուցիչ խթան կը հանդիսանայ սեփական ձեռնէրէցութեան եւ տնտեսութեան կայուն զարգացման համար: **Գեոպարկը** կը հանդիսանայ Հայաստանի՝ իբրեւ երկրաբանական զբօսաշրջութեան միջազգային ճանաչման եւ բնութեան նկատմամբ բարեւեալ գործելակերպի բարձր քաղաքակրթական նշագծի ցուցանիշ:

ԵՈՒՆԵՍԿՕ-ի «Համաշխարհային **գեոպարկերը**» ծրագիրը սկսած է 2001 թուականին եւ այժմ կ'ընդգրկէ 169 միաւոր՝ 44 երկիրներու մէջ: Հայաստանի Հանրապետութեան այդ ընտանիքին անդամակցութիւնը հիմնաւոր քայլ կ'ըլլայ բնութեան պահպանման առաւել քան արդիական հարցին լուծման ճանապարհին:

ԳԱՌՆԻ ՏԱՃԱՐԸ ՆԵՐԱՌՈՒՄԸ Ե ՀՈՈՄԵԱԿԱՆ ԿԱՅՐՈՒԹԵԱՆ ԺԱՍԱՆԱԿԱՇԵՐՁԱՆԻ ԱՇԽԱՐՀԻ ԼԱՄԱԳՈՅՆ ՅՈՒՇԱՐՁԱՆՆԵՐՈՒ ՅԱՆԿԻՆ ՄԵՋ



Պէճիքական «Le Vif Weekend» առցանց պարբերականը հրապարակած է հին հռոմէական ժամանակաշրջանի (ՆՔ 754/753 - ՔԵ 476թ.) ժառանգութեան վերաբերող լաւագոյն ճարտարապետական յուշարձաններու ցանկը:

51 ամենագեղեցիկ յուշարձաններու թիւին մէջ ներառուած է Նաեւ Գառնիի հայկական հեթանոսական տաճարը, որ կը գտնուի Կոտայքի մարզի՝ Ազատ գետի հովիտին մէջ: Գառնիի ցուցակին մէջ կը զբաղեցնէ 37-րդ դիրքը:

Գառնիի հեթանոսական տաճարը Հայաստանի մէջ կառուցուած է մեր թուարկութեան առաջին դարուն: Ե. Հայոց Տրդատ Ա. թագաւորի կողմէ: Պատմաճարտարապետական համալիրը կը գտնուի համանուն ժամանակակից գիւղի կողքին:

Գառնիի տաճարը միակ յուշարձանն է, որ կը պահպանուի Հայաստանի տարածքին եւ կը թուագրուի հեթանոսութեան եւ հելլենիզմի դարաշրջանով:

Յուցակը գլխաւորած է Հռոմի Զոլիգելը՝ աշխարհի ամենամեծ ամֆիթատրոնը եւ աշխարհի եօթը ժամանակակից հրաշալիքներէն մէկը:



Երկրորդ դիրքը կը զբաւէ հին հռոմէական երկնքի աստծոյ, լոյսի, ամպրոպի աստուած Ժիւլիփթերին նուիրած տաճարը, որ սկսած էր կառուցուիլ հռոմէական կայսր Անտոնինոս Պիոսի օրով, իսկ աւարտած՝ Ներոն կայսրի օրով (ՔԵ 37-68) եւ կը գտնուէր հնագոյն Պալալեք քաղաքի մէջ (ժամանակակից Լիբանան):

Երրորդ դիրքը զբաղեցուցած է հռոմէական պանթէոնը կամ «Բոլոր աստուածներու տաճարը», որ նուիրուած է հին հռոմէական աստուածներուն եւ կառուցուած է առաջին դարուն հռոմէական կայսր Հադրիանոսի հրամանով:

ՔԱՆԱՔԵՌՈՒՄԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՄԵՋ ԲՆԱԿՈՂ ՊԱՊԱՅԵԱՆՆԵՐԸ ՎԱԿՈՆ ՏՆԱԿԻ ՄԵՋ 25 ՏԱՐԻ ԱՊՐԵԼԷ ԵՏՔ ՏՕՆԵՑԻՆ ԻՐԵՆՑ ԲՆԱԿԱՐԱՆԱՍՈՒՄԸ

Կոտայքի մարզի Զաւաքեռաւան համայնքին մէջ բնակող Պապայեանները Նոր տարին դիմաւորեցին կիսակառոյցը տուն դարձնելու հարցին մէջ իրենց աջակցած կազմակերպութիւններուն՝ «Վիվասել-Էմ.Թի.Ես.»-ի եւ «Ֆուլեր» տնաշինական կեդրոնի ղեկավարներուն հետ: Տարիներու գործընկերներու համար կարելոր



ձեռքբերում է ոչ միայն մարդոց կեցութեան պայմաններու բարելաւումը, այլեւ՝ անոնց հոգեբանութեան մէջ կատարող դրական փոփոխութիւնը:

Ընդարձակ եւ լուսաւոր սենեակներու, մաքուր եւ յարմարաւետ տան մասին ընտանիքին մայրը երազած է ոչ միայն տօներուն, այլեւ ամէն բացուող առաւօտ, 25 տարի շարունակ: Այժմ փոխուած են երազները եւ երթեմի՝ տիրութիւնն արտայայտող հայեացքը:

«Ձմրան ամիսներուն վական-տական երկաթեայ բարակ պատերը չէին պահեր ներսը վառող վառարանին ջերմութիւնը. ներսը ջերմաստիճանը վայրկեաններու ընթացքին կ'իջնէր: Խոհանոցը կը գտնուէր դուրսը, սան-հանգոյցի մասին չեմ ուզեր խօսիլ... Տօնական օրերուն մարդիկ հիւրեր կ'ընդունէին, իսկ մեր տնակին մէջ՝ մէկ, երկու եւ Նստելու տեղ չէր ըլլար: Այսօր այդ ամէնը վառ երազ կը թուի: Առանց օգնութեան, ո՛վ գիտէ, թէ քանի՛ տարի կը տեւէր մեր գրկանքը», նշեց տանտիրուհի Արմիդան:

«Վիվասել-Էմ.Թի.Ես.»-ի եւ «Ֆուլեր» տնաշինական կեդրոնի բնակարանաշինութեան միացեալ ծրագրի տասնամեայ յաջողութիւնը խօսուն է. այդ ծրագիրէն աջակցութիւն ստացած է 391 ընտանիք՝ Հայաստանի բոլոր մարզերուն մէջ անխտիր:

«Արդէն տասը տարիէ ի վեր կ'իրականացնենք բնակարանաշինութեան ծրագիր: Կը թուի՝ ամէն ինչ նոյնն է, սակայն նրբութիւններ կան: Երկու

ՅԱՋՈՐԴ ԶԱՅԼԸ ՊԵՏՔ Ե ԸԼԼԱՅ ԱՐԱՔԱԿԱՆ ՄՇԱԿՈՅԹԻ ՕՐԵՐՈՒ ԿԱՅԱՑՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԵՋ. ՆՈՒՆԷ ՍԱՐԳՍԵԱՆ



Այս տարի «Շարժայի ժառանգութեան օրեր» մշակութային փառատօնի պատուաւոր հիւրը Հայաստանն էր: Հայաստանի նախագահին կից՝ Նունէ Սարգսեան այցելեց Շարժայի ժառանգութեան հիմնարկ:

«Պէտք է աշխարհին անգամ մը եւս ցոյց տանք, որ Հայաստանը այն գեղեցիկ երկիրն է, ուր կ'արժէ այցելել»: Շարժայի ժառանգութեան հիմնարկի տնօրէն Ապտուլազիզ Ալ-Մուսալլամի եւ «Շարժայի ժառանգութեան օրեր» մշակութային փառատօնի կազմակերպիչներուն հետ հանդիպման ժամանակ ըսաւ Նունէ Սարգսեան: Այս մասին տեղեկացուցին նախագահի աշխատակազմէն:

Արաբական Միացեալ Էմիրութիւններ աշխատանքային այցելութեան ծիրին մէջ Հայաստանի նախագահ Արմէն Սարգսեան եւ իր կինը, ինչպէս նաեւ հայկական պատուիրակութեան անդամները այցելեցին Շարժայի ժառանգութեան հիմնարկ: Իբրեւ պատուաւոր հիւր՝ Հայաստանը այս տարի մասնակցեցաւ Շարժայի ժառանգութեան հիմնարկի կողմէ իրականացուող փառատօնին՝ ներկայացնելով մեր մշակութային ժառանգութիւնը:

«Մենք մեծապէս կը գնահատենք մեր բարեկամութիւնը Արաբական Միացեալ Էմիրութեան հետ եւ կը յուսանք, որ այս կապը մեր երկիրներուն միջեւ մշակութային ծրագրի մեկնարկ կը հանդիսանայ: Կը կարծենք, որ յաջորդ քայլը պէտք է ըլլայ արաբական մշակոյթի օրերու կապացումը Հայաստանի մէջ», ըսաւ Նունէ Սարգսեան:

Ան նաեւ կարելոր համարեց Հայաստանի մասնակցութիւնը փառատօնին՝ զբօսաշրջութեան զարգացման տեսանկիւնէն եւ նշեց, որ այս կապը կրնայ խթանել զբօսաշրջիկներու հոսքը դէպի Հայաստան:

Ապտուլազիզ Ալ-Մուսալլամ իր հերթին նշեց, որ հայերը եւ արաբները ունին պատմական բարեկամական յարաբերութիւններ, եւ իրենք վստահութեամբ կը վերաբերին յատկապէս հայկական մշակոյթին, ասանդութիւններուն, ինչո՛ւ չէ, նաեւ ապրանքներուն նկատմամբ:

Տեղեկացնենք, որ փառատօնին հայկական տաղաւորը ներկայացաւ Նունէ Սարգսեանի հովանիին տակ: «Շարժայի մշակութային ժառանգութեան օրեր» փառատօնը կ'իրականանայ 2003 թուականէն սկսեալ, կը համարուի ամենայայտնի մշակութային ձեռնարկներէն մէկը եւ կը կազմակերպուի ԵՈՒՆԵՍԿՕ-ի՝ Համաշխարհային ժառանգութեան օրերու շրջանակներուն մէջ:

«ՌՈՒՄԻԱՆ ՄՏԱՀՈԳ Է, ՈՐ ԵՎՀԿԻ...»

Շարունակում Ա. Էջն

«Մենք մտահոգ ենք, որ համանախագահներու եռեակը տակաւին չէ կրցած այցելել շրջան, ծանօթանալու համար կացութեան եւ նախանշելու որոշակի քայլեր՝ օգնելու կողմերու քաղաքացիներուն միջեւ կապեր հաստատելու հարցին մէջ, մարդասիրական խնդիրները լուծելու», ըսած է Լուքաշէիչ:

Ան յոյս յայտնած է, որ այդ այցելութիւնը տեղի կ'ունենայ մօտիկ ապագային:

Անդրադառնալով Արցախի մէջ կացութեան՝ Լուքաշէիչ նշած է, որ հակառակ որոշ միջադէպերու, ընդհանուր առմամբ Ռուսիոյ ջանքերով կարելի եղած է շրջափն մէջ պահպանել կայունութիւնը: Ըստ անոր, կացութեան կայունացումը արտօնած է անդրադառնալ այլ հարցերու՝ ճամբաներու ապաշըրջափակումին, «3+3» ձեւաչափով քննարկումին եւ այլն:

«ԿԸ ՎԵՐԱՀԱՏԱՏԵՐԻ ԼԻԱՎԱՏԱՐ...»

Շարունակում Ա. Էջն

Այս մասին Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւի վերջին յայտարարութիւններուն վերաբերեալ «Արմէնփրես»-ի հարցումին իբրեւ պատասխան յայտնած են ԵԱՀԿ-ի լեհական նախագահութիւնէն:

«ԵԱՀԿ-ի լեհաստանեան նախագահութիւնը չի կրնար մեկնաբանել Ազրպէյճանի նախագահին հրապարակային յայտարարութիւնները: Մենք կը վերահաստատենք մեր լիակատար աջակցութիւնը եւ երախտագիտութիւնը ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի, անոր համանախագահներու եւ ԵԱՀԿ-ի գործող նախագահի անձնակազմի ներկայացուցիչ, դեսպան ԱՆԵՎ Զասփրիչիի աշխատանքին», պատասխանած են ԵԱՀԿ-ի լեհաստանեան նախագահութիւնէն:

Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւ նախորդ շաբաթ Ազրպէյճանական պատկերասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին սպառնացած էր ճնշել ԵԱՀԿ-ի Մինսքի խմբակի համանախագահներու՝ Լեռնային Ղարաբաղի հարցով զբաղելու փորձերը: Ան մասնաւորաբար ըսած էր. «Անոնք (համանախագահները) պէտք չէ զբաղին Լեռնային Ղարաբաղի տագնապով, որովհետեւ անիկա լուծուած է: Մենք անոնց փոխարեն լուծած ենք»: Ազրպէյճանի նախագահը նաեւ պնդած էր, թէ եթէ հակամարտող կողմերն մեկը կ'ըսէ, թէ հիմնարկները լուծուած է, ապա «միջնորդութեան կարիք այլեւս չկայ»:

Պատրաստեց՝ ՄԱՐԻՆԱ ՀԱՄԱՄՃԵԱՆ

ԱՐՅԱՆ՝ ՀԱՅԿԱԿԱՆ ԻՆՔՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋՆԱՔԵՐԴ

ԶԱԼԱԼ ԲԵԿ ԵՒ ԴԱՆԻԷԼ ԲԵԿ ՀԱՍԱՆ ԶԱԼԱԼԵԱՆՆԵՐՈՒ ՍՊԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ
ՀԱՅԵՐԸ ՆՈՎՈՌՈՍԻԱ ՏԵՂԱՓՈԽԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ

ՎԱՐԱՆԴԱՅԻ ԴԱՒԱՃԱՆ ՄԵԼԻՔ ՇԱՀՆԱԶԱՐԻ
ՉԵՒԱԿԱՆ ԿՐՕՆԱՄԻՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՄԱՀԸ
ՊԼԸ ՊՈՒՂԻ՝ ՊԱԼԱՏԱԿԱՆ ԾԱՂԱԾՈՒ

Սարգիս եպիսկոպոսի եւ անոր եղբայրներու ու միաբանա-կից հոգեւորականներու Արցախէն հեռանալէն ետք Գանձա-սարի վանքը մնաց աւեր ու ամայացած:

Սարգիս եպիսկոպոս Նոյն տարին՝ 1791-ին իր եղբայրներ Դանիէլ բէկը եւ Զալալ բէկը Գանձասար ուղարկեց, որպէսզի վանքին թաքցուած հարստութիւնները դուրս հանեն եւ Գան-ձակ բերեն:

Դանիէլ բէկ եւ Զալալ բէկ գաղտնի մտան Արցախ եւ հասան Գանձասար, բայց իսկոյն մատնուեցան:

Իպրահիմ հալիլ խանի մարդիկը բռնեցին զանոնք, Զալալ բէկի գլուխը կտրեցին, իսկ Դանիէլ բէկը տարին խանին մօտ: Իպրահիմ հալիլ խան հրամայեց, որ բանտարկեն Դանիէլ բէկը եւ անոր դառնալով ըսաւ. «Գնա հոն մնա՛, ռուսերը թող զան եւ ազատեն քեզ»:

Զանի մը օր ետք խանը բանտէն դուրս բերել տուաւ զայն եւ հրամայեց մաս առ մաս կտրատել:

Անոր քոյրը եւ մելիք Մեջլումի մայրը՝ Դամար Սոլթան, որ Շուշիի բերդին մէջ իբրեւ պատանդ կը պահուէր, հաւաքեց իր եղբօր մարմինին կտորները եւ թաղել տուաւ գերեզմանատան մէջ:

Իշխան Գրիգորի Փոթեմքին իր բանակատեղին Եաշ փո-խադրած էր: Անոր գլխաւոր բնակարանը արքունիքի տեսք ու-ներ, ուր, ինչպէս նկարագրուած է՝ ասիական շքեղութիւն ու եւրոպական նրբագեղութիւնը միախառնուած էին: Իշխանը շրջապատուած էր ասիական շքեղութեամբ եւ ստրկամիտ ամ-բոխով. հոն բերուած էին լաւագոյն արուեստագէտներ եւ նշա-նաւոր ազնուականներ, զուարճացնելու համար Նորին պայ-ծառափայլութիւնը:

Սոլտաւազի պոյարներ անձամբ կամ նամակներով շնոր-հակալութիւն կը յայտնէին իշխան Գրիգորի Ալեքսանդրովիչի՝ թուրքերու բռնակալութենէն զիրենք ազատելուն համար, կ'ը-



Պլը Պուղիի յուշաքարը Շոշ եւ Մխիթարաշէն գիւղերուն միջեւ գտնուող քարայրին մէջ



Խնապատ գիւղը Խաչեն եւ Կարկառ գետերու միջնամասին, Քիլա Խուրթի եւ Սարէ Խաչի լանջերուն եւ կտրատուած՝ հովիտներով, հարուստ է հնագիտական մեծարժէք յուշարձաններով

սէին որ միշտ պիտի մեծարեն զինք իբրեւ ազատարար եւ կը խնդրէին, որ իր ձեռքը վերցնէ իրենց երկրին ճակատագիրը:

Փոթեմքին ռուս օրթոտոքս եկեղեցւոյ ենթակայ Սոլտաւիոյ էքզարխութիւնը հաստատեց, թէեւ մոլտաւազիք Կոստանդ-նուպոլսոյ յոյն տիեզերական պատրիարքութեան կապուած էին:

Իշխան Փոթեմքին քաղաքական եւ փառասիրական վիթ-խարի ծրագիրներ ունէր եւ տեւական կապ կը պահէր Ռուսաս-տան եւ արտասահման գտնուող իր բազմաթիւ գործակալնե-րուն հետ:

Փոթեմքին Յովսէփ արքեպիսկոպոս Արդուբեանի հետ սեր-տօրէն կը գործակցէր եւ անոր կազմած հայկական ծրագիրը ընդունած էր, որովհետեւ ցանկութիւն ունէր Նոր ստեղծուելիք

Հայաստանի պետութեան գահին վրայ բազմելու:

Փոթեմքին Յովսէփ արքեպիսկոպո-սի առաջարկեց Անդրկովկասէն եւ Մոլ-տաւիայէն հայերը գաղթեցնել Նովոռո-սիա: Իշխանին նպատակն էր հարա-ւային Ռուսիոյ անբնակ հողերը վերա-բնակեցնել, ինչպէս նաեւ հայերը միշտ իր ձեռքերուն մէջ ունենալ:

Իշխան Փոթեմքին 1791 փետրուա-րին ժամանեց Պետերբուրգ: Ի պատիւ իրեն երեք հազար պալատականներու մասնակցութեամբ շքեղ խնճոյք կազ-մակերպուեցաւ: Ան փորձեց Պատին Չուպովը հեռացնել կայսրուհիէն, բայց չյաջողեցաւ: Եկատերիսա Բ.ի խընդ-րանքով վերադարձաւ Եաշ, իբրեւ Ռու-սիոյ լիազօր խաղաղ բանակցութիւն-ներ վարելու համար:

Պատերազմական գործողութիւն-ները աւարտելու վրայ էին, երբ Փոթեմ-քին Յովսէփ արքեպիսկոպոսի թելադ-րեց հայերը գաղթեցնել այն քաղաքնե-րէն, որոնք հաշտութեան դաշինքին հա-մաձայն պիտի վերադարձուէին Օսման-եան կայսրութեան: Արքեպիսկոպոսը ժրաջանութեամբ կա-տարեց այդ յանձնարարութիւնը:

Փոթեմքին հայութեան կառավարումը վստահեցաւ Յովսէփ արքեպիսկոպոսի եւ Ստեփան Դաւթեանի: Իր «Յիշատակա-րան»-ին մէջ Յովսէփ արքեպիսկոպոս կը գրէ. «Գեղարքունցի Տէր Սահակի որդի Արարատեան դէսպան կոչեցեալ պրիմըր մայեօր պարոն Ստեփան Դաւիթովն, զոր վերակացու էաք կարգեալ քնեագի հրամանաւն՝ վասն լինելոյ Նորա յազգէ մե-րէ, նա զբոլոր ժողովուրդսն մեծագոյն աշխատութեամբ էհան յամենայն քաղաքաց եւ տարաւ Տուպասար, որում ետուք մերով զկառավարութիւն Նորա»:

Իշխան Գրիգորի Փոթեմքին 5 (16) հոկտեմ-բեր 1791-ին, Եաշէն Նիկոլայեւ ճամբուն վրայ տենկէ բռնուած մահացաւ:

Փոթեմքինի մահուան առիթով Յովսէփ արքեպիսկոպոս Արդուբեան նամակ գրեց Դուկաս Ա. կաթողիկոսին, որ կ'ըսէր. «Մեք կո-րուսաք անգին իննամակալն մեր եւ գյատուկ բարերարն, այժմ ձեռն ի ծնօտի Նստեալ կամք մերային ազգօք, ակն ունենալով վերին օգ-նականութեանն եւ այցելութեանն Աստուծոյ»:

Դուկաս կաթողիկոս պատասխան նամա-կին մէջ կը գրէր. «Տրտմութիւն մեծ եղել մեզ, եւ սակս տարաբախտութեան մեր եւ ազգին մերոյ վարկաք զայնպիսի պատուական եւ խնամառատ անձին բառնիլն ու մենք յայսպի-սում ժամանակի»:

Նոյն ժամանակ, զօրավար Սովորովի բնու-թագիրի հիման վրայ Ստեփան Դաւթեանի փորխզնդապետի աստիճան շնորհուեցաւ՝ տարեկան եօթը հարիւր ռուբլի ռոճիկով: Անոր երկու տղոց, որոնք ռուսական բանակին մէջ զինուորական ծառայութեան մտած էին, շնորհուեցաւ արապորշչիկի աստիճան՝ իւրա-քանչիւրին տարեկան երեք հարիւր ռուբլի ռո-ճիկով:

Ռուս-թրքական պատերազմին վերջ տա-լու համար պատերազմող կողմերու լիազօր ներկայացուցիչները Եաշ հաւաքուած էին: Հոն կը գտնուէր նաեւ Յովսէփ արքեպիսկո-պոս:

Եաշի հաշտութեան դաշնագիրը ստորա-գրուեցաւ 29 դեկտեմբեր 1791 (9 յունուար 1792)-ին: Ռուսաստանի անցաւ Զարաւային Բուզի եւ Դնեստրի միջեւ տարածքը եւ հաս-տատուեցաւ Խրիմի միացումը Ռուսաստանի:

Պատերազմի աւարտին, Օսմանեան կայս-րութեան վերադարձուած շրջաններէն շուրջ չորս հազար հայեր անցան ռուսական սահ-մանը եւ Դնեստր գետի հովիտին մէջ հիմնեցին Գրիգորիոպոլ քաղաքը:

Վարանդայի մելիք Շահնազար, ազգի եւ հայրենիքի դաւա-ճանը, մահացաւ 1792-ին, խոր ծերութեան մէջ:

Մելիք Շահնազար իր առաջին կնոջ՝ Թագումի մահէն ետք ամուսնացած էր Դիզակի մելիք Եսայիի դուստր Սոնայի հետ եւ անոր ողջութեան կնութեան առած էր Թագումի եղբօր դուստր Մալայիկը:

Բազմակնութեան վրայ հիմնուած անոր ընտանիքին մէջ վեճերն ու անհամաձայնութիւնները անպակաս էին:

Մելիք Շահնազար իր խիղճը հանգստացուցած էր ձեւական կոնսախիրութեամբ, բարեպաշտութեան մէջ որոնելով իր մեղ-քերու թողութիւնը: Ան ինքզինք հոգեւորականներով շրջապա-տած էր եւ սովի ժամանակ ցորենի ամբարները բանալով հա-



Պլը Պուղի

ցով կերակրած էր ժողովուրդը:

Ամարասի վանքը, Մաճկալաշէն գիւղի մօտ, Խազազ եւ Լուսաւորիչ սարերուն միջեւ, հիմնուած է Սուրբ Գրիգոր Լուսաւորիչի կողմէ: Հոն թաղ-ւած է անոր թոռը՝ Աղուանքի առաջին եպիսկոպոս Սուրբ Գրիգորիս: Մեսրոպ Մաշտոց վարդապետ հոն բացած է հայկական առաջին դպրոցը, եւ վանքը կրթական ու մշակութային մեծ կեդրոն եղած է: Մոնկոլ-թաթարական արշաւ-անքներու ժամանակ վանքը քանիցս կողոպտուած եւ ւաւերուած է եւ անշուք ու կիսաւեր վիճակի մէջ կը գտնուէր:

Մելիք Շահնազար հարթավայրի վրայ գտնուող վանքը անառիկ դարձ-նելու նպատակով անոր շուրջ բարձր պարիսպներ կառուցել տուած էր առանց որեւէ անցքերու: Պարիսպնե-րու չորս անկիւններուն վրայ աշտա-րակներ կառուցուած էին: Վանքին մի-ակ մուտքը կը գտնուէր հարաւ-արեւե-լեան մասին մէջ. հոն գտնուող տնտե-սական բակը՝ գոմ, ախոռ եւ մթերանոց-ներ, երկաստիճան ամրութիւններու

համակարգերով ամրացուեցաւ: Արեւմտեան աւելի ընդարձակ բակին կեդրոնը կը գտնուի Սուրբ Գրիգորիս եկեղեցին, որուն բեմին տակ սուրբին մատուռ դամբարանն է: Մելիք Շահնա-զար սրբատաշ քարերով միաբանութեան համար խուցեր, սե-ղանատուն, ուխտաւորներու համար բազմաթիւ սենեակներ, ամբարանոցներ եւ ախոռատուն կառուցել տուած էր:

Մելիք Շահնազար տաճարի վերանորոգութեան համար քանի մը քսակ ոսկի պահած էր, երբ մահը վրայ հասաւ:

Մելիք Շահնազար կեանքի վերջին տարիներուն փորձած էր հաշտուիլ միւս մելիքներուն հետ եւ անոնց հետ ռուսաց կայս-րուհիին ուղղուած թուղթ՝ ստորագրած էր ռազմական օգնու-թեան խնդրանքով: Սակայն ժողովուրդը չէր ներած անոր եւ մեղքերը քաւել փորձող դաւաճանին մասին երգիծական աւ-անդութիւններ հիւստած էին:

Մելիք Շահնազարը հնարաւորինս ծաղրած է իր իսկ ծաղ-րածուն՝ Պլը Պուղին:

Պլը Պուղի (Խենթ Պօղոս), Շոշ գիւղէն, առակախօս էր, կա-տակաբան, սուր խօսք յօրինող, հնարամիտ ու արդարադատ: Ան մեծ հեղինակութիւն էր Արցախի մէջ եւ անոր անունը հա-սած էր մելիք Շահնազարի, որ զայն հրաւիրած էր Աւետարա-ւոց՝ իր մօտ ապրելու:

Պլը Պուղի պարզակենցաղ մարդ էր եւ անոր ամբողջ ունե-ցածը Խուրջիկի մը մէջ կը տեղաւորուէր:

Պլը Պուղի իր հնարամտութիւններով յաճախ փորձած է զգաստացնել մելիք Շահնազարը: Երկու կողմերն ալ տեւա-կան հակադրութեան մէջ եղած են, բայց մնացած են անբա-ժան:

Պլը Պուղի երբեք չէ բժնած եւ համարձակ կերպով դառն ճշմարտութիւնները մելիքի երեսին ըսած է:

Այսպէս, անգամ մը մելիք Շահնազար Պլը Պուղիի ըսած է. «Դուն խօսքի վարպետ ես, հիմա կը լռես»: Պլը Պուղի պատաս-խանած է. «Եթէ կարենայի լռել, մելիք Շահնազար, առիկա ալ մեծ օգնութիւն կ'ըլլար: Յաւը այն է, որ լռելն ալ դժուարացած է, ժողովուրդի աչքին չի Նայուիր, բոլորը կը թքեն քու վարմուն-քիդ վրայ»:

Այնուհետեւ Պլը Պուղի աւելցուցած է. «Ըծնող-կեղծող նա-գիր-վեգիրներու բանակը ինչո՞ւ կը պահես ապարանքիդ մէջ. որ դաւաճանական ու սխալ գործերդ գովե՞ն»:

«Պուղի, սահմանը կ'անցնիս: Դաւաճանս ո՞րն է: Անոնք իմ դէմ չեն խօսիր», յարած է մելիք Շահնազար:

«Մելիքը ապրած կենայ», հեզնանքը շեշտած է Պուղի. «Չիս կը պահես ոչ թէ անոր համար որ ճշմարտութիւնը կը սիրես, այլ անոր համար, որ ճշմարտութիւնը լսես ու հակառակը ընես»:

Ուրիշ անգամ մը մելիք Շահնազար Պլը Պուղիի հարցուցած է որ մարդու տունը ինչէ՞ն կը քանդուի, ան պատասխանած է. «Ներսի թշնամիէն»:

Մելիք Շահնազար իր դուստրը՝ Զիրիգատը ամուսնացու-ցած էր Իպրահիմ հալիլ խանի հետ: Բայց Զիրիգատ չէր ու-զած համակերպիլ եւ հնազանդի իր ամուսնոյն: Մելիք Շահ-նազար Պլը Պուղիի յանձնարարած էր իր յամառ ու անբան աղջկան խօսք հասկնել: Պլը Պուղի պատասխանած էր. «Մե-լիքը ապրած կենայ, բայց աղջիկդ շատ ճիշդ կ'ընէ. անոր խել-քը քու խելքէդ չէ որ այդ շուներուն ծառայէ»:

Պլը Պուղի յօրինած է զուարճալի գրոյցներ ու առակներ, որոնք ժողովուրդին մէջ տարածուելով վերափոխուած ու լրա-ցուած են եւ անոր անունով բանաւոր հասած են մինչեւ մեր օրերը: Ան մահացած է 1810-ին, շուրջ 79 տարեկանին: Յուշա-քարը կը գտնուի Շոշ եւ Մխիթարաշէն գիւղերու արանքին տե-ղակայուած քարանձախն մէջ:

Մակար վարդապետ (Գետազային՝ եպիսկոպոս) Բարխու-դարեան արցախցի ծերունիներէն գրի առած է Պլը Պուղիի 189 զուարճախօսութիւն ու առակ, որոնք 1883-ին տպագրած է Թիֆլիսի մէջ՝ «Պլը Պուղի» խորագիրով. գիրքը գրուած է Ար-ցախի բարբառով: Զետագային, այլ բանահաւաքներ Նոր գրա-ռումներ հրատարակած են:

ԲԱՐԵԿԱՄԻՍ...

Շարունակուած 3-րդ էջէն

- Ի՞նչ կ'ըսուի,- հարցուց աճող հետաքըրքու- թե-ամբ:

- Փաշինեան շարք մը պայմաններ պիտի դնէ եղեր բանակցութեանց յառաջ տարման համար...

- Բայց երեսնէն կրկին ու կրկին յայտարարեցին, որ Յայաստան Նախապայմաններ չունի բանակցու-թեանց եւ գործակցութեան դարաշրջանի բացման համար,- յիշեցուց՝ խօսքս ընդհատելով:

- Նայէ՛, դուն լաւ հայերէն գիտես: Ըսի՛ն, որ Նախա-պայման՝ չունի՛ն, սակայն չըսին, որ պայման չկայ:

- Կատա՛կ կ'ընես... Պայմանին եւ Նախապայմա-նին միջեւ ի՞նչ տարբերութիւն կայ:

- Շա՛տ մեծ տարբերութիւն, այնքան մեծ, որքան են Փաշինեանի «իմուտ» բառախաղերը,- բացատրե-ցի, քանի մը օրինակ ալ տուի «վարպետ»-ին մոլո-րեցնող խօսքերէն, լետուլ շարունակեցի,- Փաշինեա-նը հասկցեր է իմաստը բոլոր այն պայմաններուն, որոնք Թուրքիա (եւ Ազրպէյճան) յառաջ կը քաշէ եր-կար ատենէ ի վեր, սակայն հիմա «տաք կրակի վրայ» դրած է 44-օրեայ պատերազմէն ետք: Հասկը-ցեր է, թէ ի՞նչ կը Նշանակեն Ցեղասպանութեան մո-ռացումը, հայկական սփիւռքէն հեռու մնալու կոչերը, Սիւնիքին ուղղուած սպառնալիքները, Ազրպէյճանի Նախընտրած քարտէսներով եւ «Ճի.Փի.Էս.»-ներով սահմանազատում-սահմանագծումը եւ ասանկ բա-ներ: Ուրեմն մտածեր է, որ ես ալ պայմաններով եր-թամ սա բանակցութիւններուն, տեսնե՛ք՝ վերջը ի՞նչ կ'ըլլայ:

- Է՛... Ի՞նչ են եղեր իր պայմանները,- հարցուց ար-դէն թերահաւատութիւն քողարկող ձայնով մը:

- Լա՛ւ բաներ. կ'ըսուի, որ պայմանները օղակ-օղակ պիտի բացուին եղեր: Ցանկը երկար է, սակայն յիշեմ քանի մը հատը: Պիտի պահանջէ եղեր, որ պա-տաւորազմական գերիները անմիջապէս, առանց ձգձը-գումի եւ սակարկութիւններուն Յայաստան վերա-դարձուին, խոստացեր է զանոնք դատական հե-տապնդումէ գերծ պահել: Պահանջեր է, որ զոհերուն աճիւններուն որոնումը (հա՛, աճի՛ն, խեղճերը արդէն աճիւն դարձան) արագացուի, եւ բոլոր Նահատակնե-րը ըստ արժանւոյն յուղարկաւորուին, իրենց պատ-ւանդանը գտնեն:

- Է՛... Ուրի՞շշ...

- Պահանջ պիտի դնէ եղեր, որ Արցախէն գրաւեալ բոլոր իողերը անյապաղ վերադարձուին, չմոռցուին Գետաշէնն ու Շահումեանը... Պահանջ պիտի դնէ եղեր, որ մշակութային կրթողներու փճացումը դադ-րի, արձանագրուած աւերներուն եւ նիւթական վնասներուն համար հատուցում կատարուի, բոլոր զաղթականները ազատօրէն իրենց տուները վերա-դառնան եւ կորուստներուն համար փոխհատուցում ստանան Ազրպէյճանէն...

- Ի՛նչ լաւ... ի՛նչ լաւ: Կարծես թէ խելքը գլուխը գա-լու սկսեր է,- ուրախացաւ քիչ մը:

- Հարցը հոս չի վերջանար: Ցանկին վրայ են շա՛տ ու շատ պայմաններ: Օրինակ, պահանջ պիտի դնէ եղեր, որ այլեւս Չանգեզուրի միջանցքի մասին չըն-տածեն, այլ մտածեն Նախիջեւանն ալ վերդարձե-

լու, անոր երբեմնի հայ բնակչութեան վերադարձի իրաւունքը յարգելու մասին, կատարուին նիւթական հատուցումներ, օրինակ՝ խաջքարերու քանդումին, այլ հետքերու ոչնչացման դիմաց:

- Պրաւօ՝ Փաշինեան,- քաջալերուեցաւ:

- Սպասե՛... Շատ արագ եւ քիչով կը խանդավա-ռուի՛ս,- բացատրեցի:- Ասոնք Ազրպէյճանին վերաբե-րող բաժինն են, այսինքն՝ Ստալինի կերած ապուրին հետքերուն մաքրագործումը: Թուրքիայէն պահանջ-ներու պայմանը նոյնքան եւ աւելի՛ հետաքըրքական պիտի ըլլայ եղեր:

- Հա՛մ... Ըսե՛ տեսնեց:

- Ռուբինեանի բերնով եւ Սերտար Զըլըջի միջոցով պատգամ մը պիտի փոխանցուի եղեր ուղղակի Էր-տողանին: Պահանջ պիտի դրուի, որ պատմական Յայաստանի հողերուն հայութեան վերադարձին հա-մար «ճամբու քարտես» մը պատրաստուի եւ իրակա-նացման ճամբու մէջ դրուի քանի մը ամիսէն՝ անմի-ջականօրէն հիմք ընդունելով Սերի դաշնագիրին եւ Ուիլյընթեան սահմաններուն պայմանները: Չէ՞ որ Մի-ացեալ Նահանգներ ալ մաս կը կազմեն Միւսքի խումբին... Թուրքիա ո՛չ միայն ճանչնալ ցեղասպան պետութիւն մը, անժամանցելի Ցեղասպանութիւնը գործողներուն ժառանգորդը ըլլալը, այլ Նաեւ ընդու-նի նիւթական եւ այլ արդար հատուցումներ կատա-րել Յայաստանի ու հայութեան, Ցեղասպանութենէ վերապրողներու ժառանգորդներուն: Հրաժարի Ցե-ղասպանութեան հարցը պատմաբաններու ձգելու իր «գիւտ»-էն, դադրեցնէ այս «տեսութեան» պաշտպա-նութիւնը ընող հայանուն վարձկաններ Յայաստան գործուղելէ:

- Ուրի՞շշ...- հարցուց՝ թերահաւատութիւնը քիչ մը խորացնելով:

- Կարելոյր պայմաններէն մէկն ալ այն պիտի ըլլայ եղեր, որ Թուրքիա եւ Ազրպէյճան այսուիտեւ չմտա-ծեն հայութեան ու Յայաստանի, ամբողջական Հա-յաստանի դէմ որբէւ թշնամական արարք կամ ծրա-գիր հետապնդելէ, այլ ի՛նչպաէս բանաւ բարի դրաց-նութեան, գործակցութեան եւ բարեկամութեան էջը, այնպէս՝ ինչպէս այլ դարաւոր թշնամիներ այսօր մէկ-դի դրած են իրենց վանողականութիւնները (չեն մոռ-ցած, այլ ընդունած են անոնց վրայ «չկախուիլ»): Իշ-տ տ ասանկ բաներ, պայմաններ...

- Այս ըսածներդ շատ լաւ բաներ են, սակայն...

խելքս չի կտրեր: Ան այս տեսակ բաներու մարդը չէ դժբախտաբար,- եզրակացուց խօսակիցս (անկեղծօ-րէն ուրիշ պատկեր գործածեց, պատկեր մը, որուն մէջ ճանճ մը դերակատար է, սակայն պատշաճ չեմ Նկատեր իր բառերը վերադարձրել հոս):

Մեր գրոյցը շարունակուեցաւ առողջութեան եւ կաւտեսութեան յոյսերով, մաղթանքներով:

10 յունուար 2022

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ. ԱՐԴԻ...

Շարունակուած 3-րդ էջէն

Եւ այսօր, Հրանդ Տինքի սպանութեան 15-ամեակին, ամէն տարի անոր յիշա-տակին առիթով տեղի ունեցող քայլար-շանները եւ ոգեկոչման ձեռնարկները վկայ են, որ ան թրքական հասարակա-կան կեանքին մէջ գրաւեց այն տեղը, որ ամերիկեան հասարակութեան մէջ գրա-ւած էր Մարթին Լութըր Քինկը: Տինքի շուքին ներքեւ կողք-կողքի քալեցին ու կը շարունակէն քալել հայը, թուրքը, քիւր-տը եւ ալեւին. անոր շուքին ներքեւ ազ-գային ու կրօնական փոքրամասնութիւն-ները բողոքեցին ու կը շարունակէն բողո-քել՝ յանուն հաւասարութեան եւ լայնամ-տութեան. անոր ժառանգութիւնը առկայ է Թուրքիոյ մէջ զանազան առիթներու ըն-թացքին՝ յանուն խօսքի ազատութեան, ժողովրդավարութեան, այլախոհութեան եւ բազմամշակութայնու- թեան կազմա-կերպուած Նախաձեռնութիւններու ըն-թացքին:

Մենք՝ իբրեւ Հայոց ցեղասպանու-թեան ընթացքին ջարդուածներու եւ տե-ղահանուածներու ժառանգորդներ, որոնց մեծ հայրերն ու մեծ մայրերը ծնան, ջուրը խմեցին, ցանեցին ու հնձե-ցին, իրենց հարազատները թաղեցին ու իրենց արիւնը թափեցին այդ հողերուն վրայ, թող Հրանդ Տինքի սպանութեան 15-ամեակը առիթ ըլլայ վերահաստատե-լու սուրբ պայմանագիրը մեր մայրական ու պապեանական հողին հետ՝ Պոլսոյ Մարմարայի ափերէն մինչեւ Մուսա Լե-րան Վաքըֆ գիւղի Միջերկրականի ափե-րը, թիկունք կանգնելու այդ հողերուն վրայ տակաւին ապրող եւ հայկական արմատներ ունեցող մարդոց մշակութա-յին, կրօնական եւ քաղաքական պայ-քարներուն:

Թուրքիոյ Հանրապետութիւնը, որ իր հիմնադրութեան 100-ամեակի սեմին է,

ՀՐԱՆԴ ՏԻՆՔ - 15-ԱՄԵԱԿ ԵՒ...

Շարունակուած 3-րդ էջէն

Եւ այսպէս, շարունակաբար, հա-կառակ, այսպէս ըսած, վճռի կայաց-ման եւ արդարադատական գործըն-թացի աւարտին, գրեթէ վեցամեայ դրութեամբ նորովի լոյսին կու գային այնպիսի դատարկաւանկ հնարքներ, որոնք ծիծաղի տեղիք կու տային նոյ-նինքն թուրք պետութեան համար, երբ մերթ կը փորձէին խաբուսիկ «նոր» տուններէն հրամցնել հանրութեան, մերթ՝ Էրտողանական խօսքեր ծախել հասարակութեան, յանգելով վերջա-պէս որ Հրանդ Տինքի ոճիրին ետին կը կանգնին կիւլեւական շարժումի մութ ուժեր:

Արդ, պէ՛տք է յիշեցնել յաճախ, որ վերոնշեալ թաքուն կառոյցները իրար զօդողը՝ հայատեացութիւնը, այլամեր-ժութիւնն ու ցեղապաշտութիւնն է, որոնցմով կը յաւակնին յոխորտալ ընդ-միշտ, եւ կ'ընդունին զանոնք որպէս թուրք պետական մտածողութեան «առողջ տարրեր», աւելի՛ն. թրքութիւ-նը պաշտպանելու դաւանանք:

ՀԱՅՈՑ ԲԱՐՁՐԱԴԻՐ...

Շարունակուած 3-րդ էջէն

Եղածը մեր պատերազմը չէր, մեզի համար, մեր ներսը մտած ու մեր ախիւնէ ու արիւնէն օտարացած խումբ մը մար-դոց ձեռամբ եղաւ այդ պատուհասը, որուն հետեւանքները դեռ երկար պիտի կրենք...

Ու այս բոլորէն անդին՝ հիմա ի՞նչ:

Հիմա, երբ կորուստներու ժամացոյցը կամաց-կամաց կ'ուզէ լռեցնել մեր ծայ-նը, եւ հին-նոր ծրագիրի մը թոթովանքը կամաց-կամաց կը մօտենայ մեր ողնա-շարին, ինչպէ՛ս պիտի շարժինք:

Ի վերջոյ, որո՞նք են անոնք, որ կանգ-նած են թանձր վարագոյրներու ետին եւ տիւ ու գիշեր մեր կոտորուած ոտքերը բու-ժելու տեղ շրջանային մեծ հաշտութեան շեփորները կը հնչեցնեն:

Ո՛վ է մեր իրական բարեկամը, եւ ո՞ր ենք մենք հիմա:

Կոկորդի մէջ խրուած ոսկոր է մեր եր-կիրը բոլոր թշնամիներուն համար, որոնք դարի՛ւ, դարի՛ւ անոր այս ոչնչա-ցումը կ'երագէին եւ հիմա, երբ վերքի ու ցաւերու մէջ տարտղնուած մեր կամքը նորէն ոտքի պիտի կանգնի, պէտք է յի-շել, որ այս մեծ խաղերուն մէջ մշտական բարեկամներ ու ընկերներ չկան:

Կան մեծ շահեր, եւ անոնց դիմաց կան մեր բազուկն ու մեր մայրերուն ար-գասաբեր արգանդներուն ձայնը:

Կայ պայքար եւ անցեալին ջրահաճա-նելու մեծ կիրք, որ մեզ կազմած է, որ՝ մեզ այս օրունա բերած է:

Ուժե՛ր ենք մենք աշխարհով մէկ. այո՛, ուժեղ ենք:

Ունի՞նք պիրկ մկաններ ու կը խօսի՞նք այս աշխարհի լեզուն. այո՛, ունինք: Ու-նի՞նք կրակէ շապիկ, ունի՞նք կամք, ու-նի՞նք անկեղծ եւ ունի՞նք ցանցի մը խտութիւնը ունեցող մեծ ոգի:

Այո՛, ունինք:

Այդ ոգին պէտք է հաւաքել, բանալ անոր երակներու կափարիչները, հաւա-քուիլ այդ կրակին շուրջ ու նորէն նետ-ւիլ մեծ պայքարին մէջ:

Առանց պայքարի՝ մենք մեռեալ ենք, կը մեռնինք մենք, եթէ պայքարի ոգին

կը գտնուի ազգայնամոլական եւ կրօնա-մոլական աւելի ահագնացող շարժում-ներու յորձանուտին մէջ՝ Ռեճեփ Թայիփ Էրտողանի գլխաւորած Արդարութիւն եւ բարգաւաճում ու Ազգայնական շարժում կուսակցութիւններու դաշինքին պատ-ճառով, որ երբեք շանք չի խնայեր որդե-գրելու ցեղապաշտ, այլամերժ, ծաւալա-պաշտ, շրջանին մէջ ռազմական միջա-մտութեան եւ ծայրայեղական խմբաւո-րումներու քաջալերումով Նախապաշար-ման վրայ հիմնուած քաղաքականու-թիւններ: Այսօր այդ երկիրը, որ կլան-ւած է ցեղապաշտութեամբ, ծաւալա-պաշտութեամբ եւ ծայրայեղութեամբ, կարօտ է Հրանդ Տինքի լայնախոհութեան:

Պէտք չէ մոռնալ, որ Միացեալ Նա-հանգներու մէջ սեւամորթները պիտի չշահէին իրենց պայքարը ու պիտի չար-ձանագրէին նուաճումներ, եթէ Մարթին Լութըր Քինկի սպանութենէն ետք չհա-րունակէին իրենց պայքարը՝ ցոյցերով, դասադուլներով եւ գործադուլներով:

Որպէսզի Թուրքիոյ Հանրապետու-թեան 100-ամեակին այդ երկրին նկատ-մամբ վերականգնեք մեր ազգային պա-հանջատիրութիւնը, պէտք է ազգովին այսօրուընէ սկսեալ դնենք յիշեալ պայ-քարի հիմքերն ու ռազմավարութիւննե-րը, որպէսզի կարենանք մեր համեստ մի-ջոցներով դառնալ այն ուժը (ինչ որ դար-ձան Մարթին Լութըր Քինկը, Ռոզա Փորքըր եւ Ջոն Լուիսը Միացեալ Նա-հանգներու մէջ՝ ստիպելով Միացեալ Նահանգներու օրէնսդիր մարմիններուն որդեգրել սեւամորթներու իրաւունքնե-րու ընդլայնումին վերաբերող օրէնսդրու-թիւններ), որ կրնայ դերակատարութիւն ունենալ թրքական փտաողականութեան եւ ցեղապաշտ քաղաքականութիւններու խզման եւ շրջանցման աշխատանքին մէջ:

ԺԱՄԱՆՅ

ԽԱՉԲԱՆ

1 2 3 4 5 6 7 8 9 10 11

ԳՈՐԻՉՈՆԱԿԱՆ

1. Մագնիսացած ասեղով գործիչ:
2. Արեգա կնալիւն յոյս - Ցանելում - Կախարդ:
3. Լեցուն, Պատուադիր:
4. Իգական օտար անուն - Ցանդիմանութիւն:
5. Փայլիլ - Խորաթթ անուանի ֆութպոլիստ՝ Միւշեր:
6. Կանացի պատուանուն:
7. Պաղտաու տունկ - Հինտու անձնաւօթի աստածը:
8. Բուտր - Բողոք, տրտմանք:
9. Առաւ - Ծառի կոճոյ - Արական օտար անուն:
10. Ներքան - Ուրջի տակ:
11. Չաստուած - Ֆրանսա կան գետ - Արաբա կան թերա կղզի:

ՈՐՂԱԳԱՅԾԱՑ

1. Ճեղեմակ - Լաքայ, կառմբազոյն խեժ:
2. Ալիքներու մէջ ապրող որդ - Ուրուական:
3. Իրերալաշորդ տառեր - Հանջային համբւ - Մարտուած կերակուր:
4. Աւուրիլ:
5. Իգական օտար անուն - Դիաւէ:
6. Մաքրողա կան տերեւներով յոյս - Արական անուն:
7. Հասակ - Մթնոլորտային բոլորշի:
8. Հումրոսի երկերէն - Ցուցական ածական:
9. Արդաբեւ - Հաջաբոյսի տեսակ:
10. Իրերալաշորդ գիրեր - Յորանայ:
11. Հանդիսավայր - Ցուցական դերանուն:

Պատրաստեց՝ Տ. Մ. ԱՂԱԶԱՐԵԱՆ

ՍՈՒՏՈՔՈՒ

Տորիզմական եւ ուղղահայեաց ծ շարքերով եւ սիւնակներով (ՅՅԾ) կազմուած գծացանցը բաղկացած է իւրացանցիկը ծ յատակութիւն հաշուող ծ բաժիններէ (ՅԾԾ): Բացառուի սկզբունցին կիրառումով իւրացանցիկը յատակութիւն մէջ թուանշան մը գեղեղէլ՝ այնպէս մը, որ հորիզոնական իւրացանցիկը շարք, ուղղահայեաց իւրացանցիկը սիւնակ եւ ծ յատակութիւնը իւրացանցիկը բաժին ունենայ ձեւ ծ թուանշանները՝ իւրացանցիկը թուանշան միայն մէկ անգամ գործածուելու պայմանով: Այլ խոսքով՝ ո՛չ մէկ պարագայի արտառուած է թուանշան մը կրկնել միեւնոյն շարքին, սիւնակին եւ բաժինին մէջ: Սխալու համար՝ կարգ մը թուանշաններ իրենց ճշգրիտ յատակութիւններուն մէջ գեղեղուած են:

ՆԱԽՈՐԴ ԺԱՄԱՆԻ ԿԱԴՆԵՐՈՒՆ ԼՈՒԵՆՈՒՄՆԵՐԸ

ԿԱԶԱՐԸ

	1	2	3	4	5	6	7	8	9	10	11
1	Տ	Ա	Մ	Ա	Մ	Մ	Գ	Ի	Ն		
2	Է	Դ	Ի	Կ	Ա	Մ	Մ	Մ	Կ		
3	Ց	Ո	Ի	Ն	Ա	Պ	Ի	Ն	Ի	Գ	
4	Է	Կ	Ի	Ն	Տ	Ա	Լ	Կ	Ա	Մ	
5	Ի	Մ	Ա	Մ	Ա	Ն	Մ	Գ	Ց	Լ	
6	Ց	Ց	Ի	Ա	Մ	Ա	Ն		Դ	Է	
7	Ա	Մ	Գ	Ց	Գ	Օ	Գ	Ի	Կ		
8	Ի	Կ		Ց	Ա	Ի		Տ	Ց	Է	
9	Կ	Մ	Լ	Մ	Ց	Ց	Ի	Մ	Է	Ց	
10	Է	Ն	Ց	Ի	Դ	Ա	Մ	Ա	Կ	Կ	
11	Ն	Է	Կ		Դ	Է	Ա	Ի	Մ		

ՍՈՒՏՈՔՈՒ

4	5	1	3	7	8	8	6	2
7	8	9	8	2	5	3	1	4
8	2	5	1	4	6	7	5	9
3	1	2	4	5	8	9	7	6
6	4	7	2	9	1	5	3	8
5	9	8	7	6	3	2	4	1
9	8	4	5	1	7	6	2	3
2	3	5	6	8	4	1	9	7
1	7	6	9	3	2	4	8	5

ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՊԱՍՔԵԹՊՈԼ

ՊԻՊԼՈՍ-ՀՈՒՓՄ՝ 60-85

Լիբանանի պասքեթպոլի տղոց Ա. դասակարգի ախոյեանութեան 12-րդ եւ դարձի Ա. հանգրուանի բացման մրցումներուն ծիրին մէջ, երէկ տեղի ունեցաւ Պիպլոս-Յուփս ճակատումը։

Անկա ատարտեցաւ Յուփսի յաղթանակով՝ 85-60 արդիւնքով (16-19, 14-20, 19-21 եւ 11-25)։

Յաղթական կազմէն **տապըլ-տապըլ** մը իրագործեց Յիշամ Յըլու (12 կետ, 11 **ռիպաուստ**)։

Այս հանգրուանին ծիրին մէջ, այսօր ժամը 19:30-ին տեղի կ'ունենայ Անիպալ Չահլէ-Աթլաս Ֆըրզոլ մրցումը։

ՄԵՍՍԻ ԲԱՅԱԿԱՅ՝ ԱՐԺԱՆԹԻՆԻ

ՖՈՒԹՊՈԼԻ ԱԶԳԱՅԻՆ

ԽՈՒՄԲԻՆ ԿԱՏԱՐԵԼԻՔ

ՄՐՅՈՒՄՆԵՐԷՆ



Ֆրանսական Փարիզ Սեն Ժերմենի յառաջապահ Լիոնել Մեսսի, իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել Արժանթինի ֆուլպոլի ազգային խումբին կատարելիք յաջորդ մրցումներուն, այս մասին յայտնեց Արժանթինի ֆուլպոլի ֆետերասիոնին մամլոյ քարտուղարութիւնը։

Ս. Ծննդեան արձակուրդի միջոցին Արժանթինի մէջ «Քորոնա» ժաիրով վարակուած Մեսսի ցարդ բացակայ կը մնայ ֆուլպոլի դաշտերէն։

Այսպիսով, ան իր մասնակցութիւնը պիտի չկարենայ բերել Չիլիի (28 յունուար) եւ Զոլմպիոյ (2 փետրուար) տեղի ունեցալիք 2022-ի Մոնտիալի գտումի մրցումներուն։

Նշենք, որ Յարաւային Ամերիկայի գօտիին մէջ Արժանթին արդէն իսկ ապահոված է 2022-ի Մոնտիալի աւարտական հանգրուանի մրցումներուն իր տոմարը։

ՕՊԱՄԵՅԱՆԿ ՄՐՏԻ ՀԵՏ ԿԱՊՈՒԱԾ

ԽՆԴԻՐՆԵՐՈՒ ՊԱՏՃԱՌՈՎ

ԿԱՊՈՒՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԷՆ

ՎԵՐԱԴԱՐՁԱՒ ԱՐՍԵՆԱԼ



Լոնտոնեան Արսենալին մաս կազմող յառաջապահ Փիեռ-Էմերիք Օպամեյանկ, որ իր երկրին՝ Կապոնի ֆուլպոլի ազգային խումբին հետ Զամերունի մէջ կը մասնակցեր ափրիկեան ֆուլպոլի բաժակի մրցաշարքին, լքեց իր հաւաքականը՝ վերադառնալու համար Անգլիա։

Կապոնի ֆուլպոլի ֆետերասիոնին պաշտօնական կայքը յայտնեց, որ 32 տարեկան ֆուլպոլիստը «Քորոնա» ժաիրով վարակուելէն ետք սրտի հետ կապուած խնդիրներ սկսած է ունենալ։

Նշուեցաւ, որ խախտող 6 յունուարին անոր «Քորոնա» ժաիրի քննութեան արդիւնքը դրական ելած էր։

ԱՖԻԼ AFHIL

HEALTH CLUBS

BACK TO GYM

Antelias - Aghpalian Center, 04 712342

Bourj Hammoud - Arin Center, 01 255023

www.afhil.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒԹՊՈԼԻ

ՖԵՏԵՐԱՍԻՈՆԸ 30 ՏԱՐԵԿԱՆ Է

Երէկ՝ երեքշաբթի, 18 յունուարին, Յայաստանի ֆուլպոլի ֆետերասիոնը նշեց իր հիմնադրութեան 30-ամեակը։

Ֆետերասիոնին կողմէ հրապարակուած հաղորդագրութեան մէջ նշուեցաւ.

«Մրտանց կը շնորհաւորենք բոլոր անոնց, որոնք 30 տարուան ընթացքին իրենց օգտակարութիւնը ունեցան ֆետերասիոնին։

Բոլոր ֆուլպոլիստներուն կը մաղթենք բազմաթիւ յաղթանակներ։

30-ամեակի կապակցութեամբ, այս տարուան ընթացքին տեղի պիտի ու-



նենաւ բազմաթիւ միջոցառումներ, որոնց պիտի անդրադառնանք մօտիկ ապագային»։

ՓԻՆԻԿ ՈՒՍՈՒՄՆԱՄԱՐՁԱԿԱՆ ՀԱՒԱՔ

ՄԸ ՊԻՏԻ ԿԱՏԱՐԷ ԱՐԱԲԱԿԱՆ

ՄԱՅՏԵԱԼ ԷՄԻՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Յայաստանի ֆուլպոլի բարձրագոյն դասակարգին մէջ ելոյթ ունեցող խումբերէն Փինիկ երեան, նախապատրաստուելու համար 2021-2022 տարեշրջանի երկրորդ բաժինին, 19 յունուարէն 13 փետրուար ուսումնաւարձական հաւաք մը պիտի կատարէ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն մէջ։

Այս ուսումնամարզական հաւաքին ընթացքին երեանեան կազմը պիտի կատարէ նաեւ ֆուլպոլի բարեկամական մրցումներ։

Մրցակից խումբերուն անունները պիտի հրապարակուին աւելի ուշ։



Նշենք, որ տարեշրջանի երկրորդ բաժինի Ա. հանգրուանի մրցումներուն, Փինիկ իրեն մրցակից պիտի ունենայ Ալաշկերտը։

ՊԷՅՃԻՆԿ

ՀԱՅԱՍՏԱՆ ԶՄԵՌՆԱՅԻՆ

ՈՂԻՄՊԻԱԿԱՆ ԽԱՂԵՐՈՒՆ

ՊԻՏԻ ՈՒՆԵՆԱՅ ՎԵՅ ՄԱՄՆԱԿԻՅ

Յայաստանի ազգային ողիմպիական կոմիտէին պաշտօնական կայքէն կը տեղեկանանք, որ Պեյճիկի ծմեռնային ողիմպիական խաղերուն Յայաստանը պիտի ներկայացնեն վեց մասնակիցներ։

Անոնք պիտի ըլլան Միքայէլ Միքայէլեան, Զաթիա Գալստեան, Ասկելիւն Մուրատեան, Յարութիւն Յարութիւնեան, ինչպէս նաեւ Թինա Կարապետեան-Սիմոն Սենեկալ զոյգը։

Նշենք, որ միայն վերջին երկուքը ողիմպիականի արտօնագիր ունին։



ՆՅՍՈՐ՝ «ՎԱՆԱՅ ԶԱՅՆ»-ԷՆ

Radio Voice of Van - Վանայ Ձայն FM: 94.7 եւ 95 MHz

7.00	Ջայլերգներ / Բարի լոյս	4.30	Սփիւռեան խանդավառ երգեր
7.15	Սփիւռեան հանդարտ երգեր	5.00	«Վանայ Ձայն»-ը երեկոյեան
7.30	Երկու բարեւ	5.05	Սփիւռեաիայ հանդարտ երգեր
8.30	Լուրեր	6.00	Յայրենի սիրուած երգեր
9.00	Երկու բարեւ	6.30	Լուրեր
9.30	Բարեւ հարցազրոյց. հիւր՝ ղոկտ. Կարեն Ծալաթեան (ուղիղ՝ դիմատեստով)	6.50	Խանդավառ երգեր
10.00	Խանդավառ երգեր	7.30	Լիբանանահայ երգիչներու կատարումներ
10.30	Յայկական աշխարհի լուրեր (ուղիղ՝ դիմատեստով)	8.00	Օրուան երգիչներ (Սարգիս Մանուկեան եւ Արամ Մովսէսեան)
10.45	Երգային քաղաքականութիւն	8.30	Նոր երգեր (Խանդարտներ)
11.00	Յայրենի սիրուած երգեր	9.30	Յայկական աշխարհի լուրեր (կրկ.)
11.30	Ժողովրդային երգեր	9.45	Աշուղական երգեր
12.30	Ռատիօ-թատրոն (հատուած՝ Յ. Պարոնեանի «Մեծապատիւ մուրացկաններ»-էն)	10.00	Ազնաւորի հետ
1.00	Ազգային-հայրենասիրական երգեր	10.30	Պելլա Դարբինեանի եւ Ռալիսա Մկրտչեանի լաւագոյն կատարումներ
1.30	Լուրեր	11.00	Golden Oldies
2.00	Յիշատակելիները (Արցախեան նորօրեայ հերոսներ)	12.00	Յիշատակելիները/Յեղափոխական երգեր
2.05	Յեղափոխական երգեր	2.00	«ԳՈՂԱՐ» համոյթի կատարումներ
3.00	Քըլ եմ պիոյմու. հիւր՝ Իսիաք Ալզաք Ֆահրէտ (ուղիղ՝ դիմատեստով)	3.00	Կրկնութիւններ
4:00	Արմատներ (Նիւթ՝ «Առեւտուրը» ժողովրդային երգերուն մէջ)	4.30	Յայրեն ալլազան երգեր
		6.00	Յայկական երաժշտութիւն

«Վանայ Ձայն»-էն սփռուող բոլոր յայտագիրները կարելի է գտնել եւ ունկնդրել ռատիոկայանի կայքէջին արխիւներ բաժինին մէջ (voiceofvan.net):

ԹԵՆԻՍ. ԱՒՍՏՐԱԼԻՈՅ

ԲԱՅ ՄՐՅԱՇԱՐՔ

ՄԻԻՐԷՅԻ ԵՒ ՑԻՑԻՓԱՍԻ

ՅԱՂԹԱԿԱՆ ՄԵԿՆԱՐԿԸ

Աւստրալիոյ թենիսի **կրան շլեմի** միջազգային մրցաշարքին ծիրին մէջ, երէկ կատարուեցան բազմաթիւ մրցումներ Ա. հանգրուանին գծով։

Տղոց միջազգային դասաւորման չորրորդ դիրքը գրաւող յոյն Սթեֆանոս Յիցիփաս ունեցաւ յաղթանակ



կան մեկնարկ մը, երբ 6-2, 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելով Միքայէլ Եմմերին (Շուէտ)։ Մրցումը տեւեց 2 ժամ եւ 12 վայրկեան։

Իր կարգին՝ յաղթանակ արձանագրեց անգլիացի Էնտի Միլըր, որ յաղթեց վրացի Նիքոլոզ Պասիլաշվիլիին (դասուած՝ 21-րդ)՝ 6-1, 3-6, 6-4, 6-7 եւ 6-4 ար-



դիւնքով։ Անոնց միջեւ այս ճակատումը տեւեց 3 ժամ եւ 52 վայրկեան։

2-րդ դասուած Տանիիլ Մետվետե (Ռուսիա) 6-1, 6-4 եւ 7-6 արդիւնքով պարտութեան մատնեց Յենրի Լաքսոնենը (Չուիցերիա)։

Աղջկանց մրցումներուն, յաղթանակ արձանագրեց 2-րդ դասուած Արիսա Սապալենշա (Պիլիժոնսիա), որ 5-7, 6-3 եւ 6-2 արդիւնքով պարտութեան մատնեց աւստրալիացի Սթըրմ Սանտերսը։

14-րդ դասուած ռումանացի Սիմոնա Յալեփի իր կարգին ունեցաւ յաղթական մեկնարկ մը՝ 6-4 եւ 6-3 արդիւնքով պարտութեան մատնելով Մակտայէնա Ֆրեշը (Լեհաստան)։

«ԷՆ. ՊԻ. ԷՅ.»

ԼՈՍ ԱՆՃԵԼԸՍ ԼԷՅԲԵՐԶԻ

ՅԱՂԹԱԿԱՆ ԵՒ ԼԵՊՈՐՆ

ՃԷՅՄՍԻ ՄՐՅԱՆԻՇԸ

«ԷՆ. ՊԻ. ԷՅ. »-ի պասքեթպոլի ախոյեանութեան ծիրին մէջ երէկ կատարուած մրցումներուն, Լոս Անճելըս Լեյքըրզ, որ իր դաշտին վրայ հիւրընկալեց Եութա Ճեզը, արձանագրեց 101-95 արդիւնքով յաղթանակ մը։



Յաղթական կազմէն տպաւորիչ ելոյթ ունենալով 25 կետ, 7 **էսիսթ** եւ 7 **ռիպաուստ** նշանակեց անուանի խաղացող Լեպրոն Ճեյմս։

Այս ցուցանիշին շնորհիւ Լեպրոն Ճեյմս յաջողեցաւ «ԷՆ. ՊԻ. ԷՅ. »-ի պասքեթպոլի ախոյեանութեան գծով մրցանիշ հաստատել՝ նկատի ունենալով, որ ան միակն է, որ յաջորդաբար 14-րդ մրցումն ըլլալով կը նշանակէ նուազագոյնը 25 կետ, առնուազն մէկ անգամ կը նշանակէ **թրի փոյնթ** եւ ձեռք կը ձգէ 5 **ռիպաուստ**։

«ԹՈՒՐԲԻՒՆ ՊԱՔԱՆԵԱՆ ... »

Շարունակուած Ա. Էջէն

«Կիւլէն ահաբեկչական եւ ձեռքերը անմեղներու արինով ներկուած կազմակերպութիւնը մեծ սպառնալիք կը ներկայացնէ իր գտնուած երկիրներուն եւ ոչ միայն Թուրքիոյ համար», ըսաւ ան՝ նշելով. «Ալպանիայէն կը սպասենք, որ յառաջիկայ փուլին իր հողերուն վրայ Կիւլէն խմբաւորման ցանցին դէմ արագ, շօշափելի եւ անելի խիստ քայլերու դիմէ»։

Թուրքիոյ Նախագահը նաեւ յայտնեց, որ անցեալ տարի իր երկրին եւ Ալպանիոյ միջեւ առեւտրական շրջանառութիւնը աճած է շուրջ 68 առ հարիւրով ու հասած 853 միլիոն տոլարի։ Ան նշեց, որ Թուրքիան կը փափաքի Ալպանիոյ հետ առեւտրական շրջանառութիւնը կարճ ժամանակի մէջ հասցնել միլիարտ տոլարի։

«Պետք է տարբեր ոլորտներու մէջ յարաբերութիւնները առաւել եւս ամրապնդել», շեշտեց Էրտողան։

ԷՐՏՈՂԱՆ ԴԱՐՁԵԱԼ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ՈՐ ԹՈՒՐԲԻԱՆ ԴԷՄ Է «ԽՐԻՄԻ ԲՈՆԱԳՐԱԽԱՆ»

Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թափի Էրտողան անդրադարձած է Ռուսիոյ կողմէ Ուքրանիա ներխուժման հաւանականութեան՝ զայն անուանելով իրականութենէ հեռու: «Անատոլու» կը հաղորդէ, որ ան այս մասին յայտնած է Ալպանիա այցելութեան ընթացքին իրենց ուղեկցած լրագրողներու հետ զրոյցի ընթացքին:

Թուրքիոյ ղեկավարը տեղեկացուցած է, որ մտադիր է Ուքրանիոյ մէջ տիրող կացութիւնը քննարկել Ազրայէճանի նախագահին հետ, որ օրեր առաջ գտնուած է Զինի մէջ:

Թուրքիոյ նախագահը ընդգծած է, որ ժամանակակից աշխարհին մէջ օտար հողերը բռնագրաւելու ձգտումը ցանկալի արդիւնքի պիտի չյանգեցնէ: «Օրինակի համար, Ռուսիան Ուքրանիոյ եւ Խորմի մէջ ի՞նչ քայլերու ձեռնարկած է: Փութինի հետ ամեն անգամ զրոյցի ժամանակ ես կը յայտարարեմ, որ Թուրքիան դէմ է Խորմի բռնագրաւման: Այդ դիրքորոշումը Ռուսիոյ կը յայտնէ թրքական արտաքին գործոց նախարարութիւնը: Այսինքն, Թուրքիոյ այդ հարցով դիրքորոշումը յստակ է», ըսած է Էրտողան:

ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՌԱԶՄԱՓՈԽԱԴՐԱԿԱՆ ՕԴԱՆԱԽԵՐԸ ՄԵԿ ՕՐՈՒԱՆ ՄԵՋ ԴԷՊԻ ՌՒՔՐԱՆԻԱ ՀԻՆԳ ԹՈՒԶՔ ԿԱՏԱՐԱԾ ԵՆ

Բրիտանիոյ Թագաւորական օդուժի «Սի-17Է» Կոպմասթըր 3» ծանր ռազմափոխարկական առևտուկն ինկզօղանաւոր վերջին օրուան ընթացքին դէպի Ուքրանիա թռիչքներ կատարած են: «Ինթըրֆաքս» կը հաղորդէ, որ այս մասին կ'եզրակացուի արեւմտեան թռիչքներու աղբիւրներու տուեալներէն: Բրիտանական օղանաւերը, որոնք Անգլիոյ օդուժի «Պրայն Լորթըն» ռազմակայանէն թռիչք կատարած են, էջը կատարած են Զինի մէջ: Իւրաքանչիւր «Սի-17Է» Կոպմասթըր 3»-ը կրնայ տեղափոխել մինչեւ 77,7 թոն բեռ:

Նախապէս Բրիտանիոյ պաշտպանութեան նախարար Պէն Ուոլըս, խորհրդարանին մէջ յայտարարած է, որ Բրիտանիան հակահրապայային սպառազինութիւն պիտի մատակարարէ Ուքրանիոյ: Բրիտանական ռազմափոխադրական օղանաւերը Ուքրանիա

Ան նաեւ յայտնած է, որ Միացեալ Նահանգներ Սուրիոյ մէջ ահաբեկիչներուն կ'օժանդակեն:

«Ի՞նչ կը կատարուի մեր հարաւային սահմաններուն վրայ. Միացեալ Նահանգներու ռազմակայանները տեղակայուած են դրացի երկրի զգալի հատուածին մէջ: Կան նաեւ ռուսական ռազմակայաններ: Միեւնոյն ժամանակ ամերիկացիները գործօն կերպով կ'աջակցին ահաբեկիչներուն: Ի հարկէ, Անգարան չի կրնար այս բոլոր գործընթացները անտեսել», ըսած է Թուրքիոյ ղեկավարը:

Էրտողանի համաձայն, ինք Սուրիոյ հարցը արծարծած է նաեւ Միացեալ Նահանգներու նախագահ Ծօ Պայտընի հետ անձնական հանդիպումի ժամանակ:

«Մեզի կ'ըսեն, որ ահաբեկիչներուն աջակցութիւն չկայ, եւ շուտով ուժերը դուրս պիտի բերուին Սուրիայէն: Ասիկա, ի հարկէ, ճիշդ չէ: Ռուսիան եւս ուժերը դուրս չի բերեր Սուրիայէն. յոյս կ'ունենան այսօր հրաժարի Սուրիոյ հարցին մէջ իր դիրքորոշումէն, ապա Պաշտօն Ասատի վարչակարգը չի դիմանար», ընդգծած է Էրտողան:

թռիչքներ կատարելու ժամանակ շորջանցած են Գերմանիոյ օդային տարածքը, որովհետեւ Պերլին դէմ արտայայտուած է դէպի Ուքրանիա գէնքի մատակարարումներուն: Անոնք անցած են Դանիոյ եւ Լեհաստանի վրայով:

Բացի ատկէ, մէկ օր առաջ Միացեալ Նահանգներու Զանթսվիլ քաղաքէն (Ալպամայի նահանգ) Էկով հասած է ուքրանական «Ան-24» ծանր փոխադրական օղանաւը: Զանթսվիլ քաղաքին մօտ տեղակայուած է ամերիկեան բանակի Ռետսթոնի գիւնակոցը:

18 յունուարին Ուքրանիոյ երկինքին վրայ արձանագրուած է ամերիկեան օդուժի «Ան.Սի.-135Տապլիու Ռիվթ Ծոյլթ» պատերազմական հետախուզական օղանաւի բազմաժամեայ թռիչքը: Օղանաւը երթեւեկած է Տոնպայի եւ Խորմէն դէպի հիւսիս գտնուող սահմանագատման գծի երկայնքին:

ԱԶՐՊԷՅՃԱՆ ՅԱՅՏԱՐԱՐԱԾ Է, ԹԷ ԵՐԵՒԱՆ ՊԱՔՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԱԾ Է ԱԿԱՆՆԵՐՈՒ ՀԻՆՑԱԾ ՔԱՐՏԷՄՆԵՐ

Հայաստանի տրամադրած քարտէսները ցոյց կու տան միայն Նախկին չլիման գիծին վրայ պաշտպանական նպատակներով ստեղծուած ականապատ դաշտերը: «Երկիր» կը հաղորդէ, որ այս մասին մամլոյ ասուլիսի ընթացքին ըսած է ազրպէյճանական ակնակազերծման գործակալութեան՝ ԱՆԱՄԱ-ի խորհուրդի նախագահի տեղակալ Սամիր Փոլատով:

Ըստ անոր, Հայաստանը անոնց մէջ չէ Նշած Նախկին չլիման գիծէն դուրս ստեղծուած ականադաշտերը:

«Ականային խնդիրը, խիտ ականապատումը եղած է ինքնին Նախկին շրջման գիծին վրայ, իսկ Շուշին ու Ադուա-



մը կը գտնուին Նախկին չլիման գիծէն շատ հեռու», ըսած է ան:

ԹՈՒՐԲԻԱՆ ԵՒ ԱԶՐՊԷՅՃԱՆԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՊԻՏԻ ՍԿՍԻՆ ԻԳՏԻՐ-ՆԱԽԻՋԵԻԱՆ ԿԱԶԱՏԱՐ ԽՈՂՈՎԱԿԻ ՇԻՆԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

Թուրքիան եւ Ազրպէյճանը այս տարի պիտի սկսին գործադրութիւնը Նախիջեան բնական կազի մատակարարման մասին յուշագիրին, որ ստորագրուած է 2020 թուականին երկու երկիրներու ուժանիւթի նախարարներուն կողմէ: Այս մասին, ինչպէս «Արմենիքս» կը նշէ, կը հաղորդէ թրքական «Սապաի»-ը:

ՊՈԹԱԾ ԵՒ ՍՈՔԱՐ ընկերութիւններուն կողմէ գործադրուող այս նախագիծին ծիրին մէջ Նախիջեան բնական կազ պիտի մատակարարուի Թուրքիոյ Իգտիրի նահանգէն:

Թրքական կողմէն ընդհանուր ներդրում պիտի կազմէ 185 միլիոն լիրա: Այս տարի Թուրքիան մտադիր է Նախա-



գիծին մէջ ներդրել 100 միլիոն լիրա: Համաձայնագիրին մէջ կը նշուի, որ Նախիջեանին պիտի տրամադրուի տարեկան 500 միլիոն խորանարդ մետր բնական կազ: Իգտիրէն Նախիջեանի Ինքնավար Հանրապետութիւն պիտի մատակարարուի 1,5 միլիոն խորանարդ մետր կազ:

ՖՐԱՆՍԱՅԻ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾՈՑ ...

Շարունակուած Ա. Էջէն

Ըստ «Նուվէ Տ'արմենի»-ին, այս մասին նախարարը խօսած է խորհրդարանին մէջ՝ երեսփոխաններուն հետ հարցում-պատասխանի ընթացքին:

Ժան Իվ Լը Տրիան հաստատեց, որ Ալիեւի յայտարարութիւնները ձեռով եւ բովանդակութեամբ անընդունելի են՝ յայտնելով, թէ այդ մասին ինք խօսեցաւ Ֆրանսայի մէջ Ազրպէյճանի դեսպանին հետ:

Յայտնենք, որ այս տարուան սկիզբը Հայաստան եւ Արցախ այցելած Փեքրէս Ազրպէյճանի «Սեւ ցանկ»-ին մէջ ներառուեցաւ, ինչպէս նաեւ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւն կանչուեցաւ: Ֆրանսայի գործերու ժամանակաւոր հաւատարմատարը «Եւ անոր յղուեցաւ բողոքի գիր»:

ՖՐԱՆՍԱՅԻ ՆԱԽԱԳԱՅԻ ԹԵԿԱՆՇՈՒՆ ԲՈՂՈՔ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄԸ Ե ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ՆԱԽԱԳԱՅԻՆ ԴԷՄ՝ «ՄԱՅԱՓՈՐԶԻ ՍՊԱՆԱԼԻԷԻ»-Ի ՊԱՏՏԱՌՈՎ

Ֆրանսայի նախագահի աջակողման Հանրապետական կուսակցութենէ թեկնածու Վալերի Փեքրէսի վրդովեցուցած է իր երկրի իշխանութիւններուն արձագանգը Արցախ մեկնելուն վերաբերեալ Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւին կատարած յայտարարութենէն ետք: «Եօրով 1» ծայնասփիւռի կայանին հետ հարցազրոյցի ընթացքին, Իվ տը Ֆրանս շրջանի ղեկավարը ըսած է, որ ինք իրաւապահ մարմիններուն բողոքը ներկայացուցած է ընդդէմ Ազրպէյճանի նախագահին՝ «սպանութեան սպառնալիքի» պատճառով:

Դեկտեմբերին Վալերի Փեքրէս այցելած էր Հայաստան: Այս ուղեւորութեան ընթացքին ան այցելած էր նաեւ Արցախ:

«Ես Հայաստան գացի, որովհետեւ չափազանց մտահոգուած եմ Միջին Արեւելքի քրիստոնեաներուն հարցով, եւ որովհետեւ Հայաստանը պաշտպանելը շատ կարեւոր է», ըսած է ան:

Տեղեկանալով այցելութեան մասին՝ Ազրպէյճանի արտաքին գործոց նախարարութիւնը բողոքագիր յանձնած էր Պաքուի մէջ Ֆրանսայի դեսպանատան գործերու ժամանակաւոր հաւատարմատարին: Ալեի ուշ, 12 յունուարին, Ազրպէյճանի նախագահ Իլիամ Ալիեւ տեղական պատկերասփիւռի կայանին տուած հարցազրոյցին մէջ ըսած էր, որ եթէ Պաքուն իմանար այս այցելութեան մասին, ապա Փեքրէսին «չէր արտօներ» վերադառնալ Ֆրանսա:

«Կազմակերպուած ճամբորդութիւն էր, որովհետեւ Վալերի Փեքրէսը չկցաւ երթալ ցանկալի ուղեկցութեամբ, անոնք գացին սահմանափակ թիւով: Անոր հետ էին Ֆրանսայի Նախկին արտաքին գործոց նախարարը, Եւրոպական Միութեան յանձնակատար Պառնիէն եւ մէկ երեսփոխան: Անոնք զադտնի մտած են այնտեղ եւ վերադարձած: Այդ մասին յայտնի դարձաւ անոնց վերադարձէն ետք, որովհետեւ, հաւանաբար, կը վախճային, որ Լաչինի միջանցքին մէջ գանոնք պիտի կանգնեցնեն: Որովհետեւ եթէ իմանայինք, որ անոնք այնտեղ են, հաստատ անոնք վերադառնալ չէինք ձգեր», ըսած էր Ազրպէյճանի նախագահը:

Վալերի Փեքրէս Ալիեւի խօսքերը կոչած էր «ցնցող»՝ «Ատիկա ի՞նչ կը նշանակէ: Որ ինքը պիտի խախտէր մէկ այլ պետութեան գերիշխանութիւնը»:

Ֆրանսայի նախագահական թեկնածուն նաեւ դատապարտած է Ֆրանսայի իշխանութիւնները՝ իրեն չաջակցելու համար: «Նախագահի թեկնածուին չպաշտպանող կառավարութեան խլացուցիչ լռութիւնը վրդովեցուցիչ է», աւելցուցած է Փեքրէս: Կիրակի, 16 յունուարին, աշակերտման Հանրապետական կուսակցութեան նշանաւոր ներկայացուցիչները «Ժ.ՏԷ.ՏԷ.» հրապարակման մէջ հրապարակեցին նախագահ Էմանուէլ Մաքրոնին ուղղուած բաց կոչ մը: Անոր մէջ անոնք վրդովում յայտնած են Իլիամ Ալիեւի խօսքերուն վերաբերեալ՝ զանոնք կոչելով «Ֆրանսացի քաղաքական գործիչի դէմ ատելութեան կոչ», ինչպէս նաեւ «քողարկուած սպառնալիք մեր ազգին, մեր կառավարութեան եւ անոր ներկայացուցիչներուն դէմ»:

«Կը խնդրենք՝ Ազրպէյճանի Հանրապետութենէ պահանջել պաշտօնական ներողութիւն, ինչպէս նաեւ անոր քաջակայութեան պարագային կարելի եղածին չափ շուտ քննել մեր դեսպանը ետ կանչելու կարելիութիւնը: Ասկէ կախեալ է Ֆրանսայի պատիւը», կը նշուի կոչին մէջ:

Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն տակալին չէ արձագանգած հանրապետականներու կոչին: Ֆրանսայի Ազգային ժողովի «Յառաջ հանրապետութիւն» խմբակցութեան ղեկավար Քիւրթֆ Քասթաներ երկուշաբթի «ՊԷ.Է.Ֆ.Է.Ս.Թ.Է.ՎԷ./Եր.Էմ.ՍԷ.»-ին ըսած է, որ պետութեան ղեկավարը «պարբերաբար կ'արձագանգէ իրավիճակներուն, երբ խօսքը կը վերաբերի քաղաքական գործիչներուն ուղղուած սպառնալիքներուն»:

ՇՈՒԷՏԻ ՄԵՋ ...

Շարունակուած Ա. Էջէն

Կը նշուի, որ տարբերակը յայտնաբերուած է երեք մարդու մօտ: «Օմիքրոն»-ի նոր ենթատեսակը ստացած է «Պի.Էյ.2» անունը:

Ակադեմական տարրաւործարանի մանրեաբանութեան ամպիոնի վարիչ Եոհան Լեներսթատայի կարծիքով՝ տակալին կանուխ է խօսիլ այդ ենթատեսակի վտանգին եւ կայունութեան աստիճանին մասին:

«Զորոնա» ժաիրի «Օմիքրոն» տարբերակը տարածուած է աշխարհի շարք մը երկիրներու մէջ:

Առողջապահութեան համաշխարհային կազմակերպութեան տուեալներով՝ «Զորոնա» ժաիրի «Օմիքրոն» տարբերակով վարակման պարագաներ արձանագրուած են աշխարհի 100-է աւելի երկիրներու մէջ:

Միացեալ Նահանգներու եւ Ճափոնի գիտնականներուն տուեալներով՝ «Օմիքրոն»-ը կրնայ աւելի թեթեւ ընթացք ունենալ, որովհետեւ աւելի քիչ կ'ազդէ թոքերուն վրայ: «Օմիքրոն»-ի պատահարման հիմնական գտիւնները քիթ-կոկորդն են ու վերին շնչուղիները:

ԵՐԵՄՓՈԽԱՆ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ ...

Շարունակուած Ա. Էջէն

Այս մասին ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէ եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ երեսփոխան Յակոբ Բագրատունի «Էմ. Թի. Վի.» պատկերասփիւռի կայանին հետ ունեցած իր հարցազրոյցին ընթացքին կը յայտնէ, որ ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ընտրական դաշինքներ գոյացնելու իմաստով բաց է քաղաքական բոլոր ուժերուն հանդէպ եւ կը սերտէ ընտրական դաշինքներ կազմելու բոլոր հաւանականութիւնները:

Ան կը շեշտէ, թէ ընտրական դաշինքները կը տարբերին քաղաքական դաշինքներէն՝ աւելցնելով, որ ընտրական դաշինքներուն նպատակն է կարելի եղածին չափ մեծ թիւով երեսփոխաններ հասցնել խորհրդարան, «ինչ որ իւրաքանչիւր կուսակցութեան եւ պլոքի իրաւունքն է», կ'ըսէ ան:

Հետեաբար ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէին ընտրամրցենայի պատասխանատուները կը սերտեն բոլոր կարելիութիւններն ու հաւանականութիւնները, ըուէներու համեմատութիւններն ու վարկանշային քուէները:

Իսկ այն հարցումին, թէ ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէն ե՞րբ պիտի որոշէ իր դաշնակիցները, Յ. Բագրատունի կը բաւարարուի պատասխանելով. «Տակաւին ժամանակ կայ»:

Ճիշդ է, որ ՀՀ Դաշնակցութիւնը հայկական կուսակցութիւններուն մէջ միակն էր, որ կրցաւ իր թեկնածուները յաջողցնել, սակայն երեսփոխանական ընտրութիւններուն արդիւնքները փաստեցին, թէ ոչ հայկական կուսակցութիւնները եւս անոր մրցակից դարձած են ընտրական խաղին մէջ՝ նկատի ունենալով, որ Պէյրութի մէջ Ժան Թալուգեանն ու Փոլա Եագուպեանը, իսկ Չաիլի մէջ Էտի Տեմիճեանը յաղթանակ արձանագրեցին:

Միւս կողմէ, ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչը Հիւսիսային Մթնի մէջ, իսկ Յակոբ Թերգեանն ու Ալեքսանտր Մաթոսեանը Պէյրութի Ա. ընտրաշրջանին մէջ յաղթանակ արձանագրեցին:

Արդեօք ՀՀ Դաշնակցութիւնը իր երեսփոխանները պիտի պահէ, թէ՛ կ'ուղղուի գանոնք փոխելու:

Յ. Բագրատունի կը հաստատէ, որ տակալին ոչ մէկ որոշում տրուած է այս իմաստով. ո՛չ որոշուած է գանոնք պահել, եւ ո՛չ ալ փոխել՝ նոր թեկնածուներով: Սակայն յստակ է, որ ՀՀԻ-ն երեսփոխանական ընտրութիւններուն պիտի մասնակցի Պէյրութի, Չաիլի եւ Հիւսիսային Մթնի մէջ, ինչպէս նաեւ կը սերտէ քուէարկողներ ունեցած շրջաններուն պարզած իրավիճակը:

Հակառակ քաղաքական կարգ մը այլ ուժերու եւ կուսակցութիւններու, ՀՀ Դաշնակցութիւնը չէ անտեսած արտերկրի լիբանանցիներու քուէարկութեան իրաւունքը, այլ՝ յաջողած է տարբեր շրջաններու մէջ մղել, որ 3000 լիբանանահայեր արձանագրուին ընտրութիւններուն մասնակցելու, ինչպէս նաեւ աշխատանք կը շարունակուի՝ քաջալերելու բոլորը, որպէսզի մասնակցին երեսփոխանական ընտրութիւններուն:

Ուրեմն, ՀՀ Դաշնակցութիւնը իր ներքին քննարկումները կը շարունակէ, եւ մինչեւ վերջական սպիտակ մոխը բարձրանալը, ՀՀԻ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի կեդրոնատեղին պիտի ըլլայ հաղորդակցութիւններու, քննարկումներու, հանդիպումներու եւ այցելութիւններու բոլն մը:

Շարժում մըն է, որ ՀՀԻ-ի համար սիրելի է, եւ անոնք գիտեն լաւ կերպով եւ լաւագոյն միջոցներով խաղալ այդ խաղը:

ՌՈՒՐԻՆԵԱՆ «ԹՈՒՐԲԻՈՅ ...»

Շարունակուած Ա. Էջէն

փոխնախագահ Ռուբէն Ռուբինեան յայտնեց, որ առաջին հանդիպումին միտքեր փոխանակուեցան, թէ ինչպէ՞ս կը տեսնեն գործընթացը՝ թէ՛ **թեքնիք**, եւ թէ՛ նաեւ բովանդակային առումով:

«Հիմնականին մէջ ճանաչողական բնոյթ ունէր, եւ հիմնականին մէջ միտքեր փոխանակած ենք այն մասին, թէ ինչպէ՞ս կը տեսնենք գործընթացը՝ թէ՛ **թեքնիք**, եւ թէ՛ բովանդակային: Փորձ կը կատարուի երկուստեք քննարկել ոչ սուր անկիւններ յառաջացնող հարցերը, այլ՝ դրական հարցերը», տեղեկացուց ան:

Ռուբինեան յիշեցուց, որ ներկայացուցիչներու հանդիպման արդիւնքներուն մասին երկու կողմերու արտաքին գործոց նախարարութիւնները արդէն մամլոյ հաղորդագրութիւններ հրապարակեցին:

«Հայկական կողմին ցանկութիւնն է, որ ըստ կարելոյն արագ ներգրաւուինք բովանդակային, այսինքն՝ Եակաբ բանակցութիւններու մէջ, որովհետեւ մենք հետաքրքրուած ենք իրական խնդիրներու լուծումով: Եւ ատիկա նախ եւ առաջ սահմանի բացումն է: Մենք ըսած ենք եւ կ'ըսենք հետեւեալը՝ Հայաստանը պատրաստ է առանց նախապայմաններու հասնիլ յարաբերութիւններու կարգաւորման», նշեց Ռուբինեան: